Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

1284

№ 1

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱԿԱԼԿՈԼԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

# ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՇՆԱՄԻՆ

ԿԱԶՄԵՑ

ԴՈԿՏՈՐ Կ. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ

[illegible]

ԻԶՄԻՐ

ՏՊԱԳՐ. ՍԱՄՈՒԻՐԵԱՆ

1901

613.8
Փ-22

610
208-փԱ
613.8 ԿՐ
Փ-22

« Ալկոլը մեր օրերում աւելի աւերումներ է գոր-
« ծում, քան թէ այս երեք պատմական աղէտները՝
« սովը, ժանտախտը և պատերազմը։ Ալկոլը՝ սովից
« ու ժանտախտից աւելի է կոտորում, պատերազմից
« աւելի է սպանում. սպանելուց աւելին է անում,
« անպատւութիւն է բերում։ »

ԳԼԱԴԸՍՏՕՆ

2010

№ 1
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱԿԱԼԿՈԼԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

# ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՇՆԱՄԻՆ

ԿԱԶՄԵՑ
ԴՈԿՏՈՐ Կ· Ց· ՓԱՇԱՅԵԱՆ

2002
ԳՐԱԴԱՐԱՆ
10429

Խնդրւում է հայ թերթերից որ այս բրօշիւրից արտատպումներ եւ քաղւածներ անեն՝ մեր մարդասիրական պրօպագանդային ոյժ տալու համար։

ԻԶՄԻՐ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ
1901

16255 610/208-փկ

معارف نظارت جلیلهسنك ١٠٠ نومرولی و ٢٨ نیسان
١٣١٧ تاریخلو رخصتنامهسیله طبع اولنمشدر

Թաւրիզ, 1 Մայիս 1901

Յարգելի խմբագիր,

Պարսկաստանի ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը խնդրում է Արտասահմանի հայկական Գրադարանների, Դպրոցների եւ զանազան կրթական ընկերութիւնների վարչութիւններից, որ բարեհաճէին Թաւրիզում նշանակել մէկին, որպէս զի Ընկերութեան հրատարակած № 1. — *Մարդկութեան Ամենամեծ Թշնամին* գիրքը ձրիաբար յանձնուի նրան եւ նրա միջոցաւ իրանց։

Կարելի է ուղղակի եւս ստանալ, միայն այս պարագայում, հարկաւոր է Ընկերութեան ուղարկել փրանսերէն որոշ հասցէներ եւ գրքի ճանապարհածախսը 10 կոպէկանոց պօստի մարկա, եւ կամ հաւասար արժէքով օտար երկրի մարկաներ։

Իսկ Պարսկաստանում ամէն մարդ կարող է ձրիաբար ստանալ, դիմելով հետեւեալ հասցէներին։

Թաւրիզ. — *Դոկտ. Կ. Փաշայեան*
Սալմաստ. — *Ոսկեան Թադէոսեան*
Թեհրան. — *Գառնիկ Տաղիճեան*
Նոր-Ջուղայ. — *Հայոց Առաջնորդարան*
Մարաղայ. — *Արտաշէս Նազարեան*
Արդաբէլ. — *Գաբրիէլ Շահպազեան*
Ուրմիա. — *Նիկողայոս Հայրապետեան*
Ղազվին. — *Յարութիւն Շահնազարեան*

Թեհրան. — Մնացական Թունեան
Խոյ. — Դիմիտրի Շահվերդեան
Ռաշտ. — Համբարձում Մելիք-Սարգսեան
Համադան. — Արժ. Խորէն Քահանայ Տէր Վարդանեան

Թղթակցութիւններ եւ դրամական եւ այլ նուէրներ պէտք է ուղղուին հետեւեալ ասպահով հասցէին.

Mr. Le Président de la Société
Antialcoolique de Perse,
à Tauris

Հաճեցէք, Յարգելի խմբագիր, մեր այս յայտարարութեան մի անկիւն շնորհել ձեր պատուական թերթում եւ ընդունիլ մեր շնորհակալութիւնը.

**ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

# ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ
# ԱՄԵՆԱՄԵԾ ԹՇՆԱՄԻՆ

*Մարդկութեան ամենամեծ թշնամին ալկոհոլն է. մարդկութիւնը սրա նման մի անգութ և ահեղ թշնամի չունի. ամենասոսկալի ջարդերի և կոտորածների պատճառ դարձող համաճարակ հիւանդութիւններն ու բնութեան արհաւիրքները, որոց մէջ կարելի է հաշուել ժանտախտը, խոլերան, դեղին տենդը, տիֆը, ծաղիկը, դիֆտէրին, սկարլատինը և այլն, և երկրաշարժը, սիքլոնը, սովը, և նոյն իսկ ահարկու պատերազմները, այնքան խոր, տևական և հիմնական չարիքներ չեն յառաջացնում, որքան ալկոհոլը հասցնում է մարդկային սեռին:*

*Որովհետև յիշուած այդ աղէտները մարդկութեան մասնակի կերպով վնասում են և նրանց դադրելուց յետոյ մարդկութիւնը կարողանում է շուտով դարմանել իւր վնասները, պակասածի տեղը լրացնել. այո՛, ստատիստիկները անհերքելի կերպով ապացուցանում են որ այդ աղէտներից յետոյ ծնունդները աւելի են շատանում և այս կերպով հաւասարութիւնը համակշռում: Սակայն մինչդեռ ալկոհոլը, ընդհանրապէս ամբողջ մարդկութիւնը իրան զոհն է դարձնում: Նրա պատճառած վնասներն անդարմանելի են, ոչ միայն ներկայ սերունդներն են փճացնում և այլասերում,*

այլ և ապագայ սերունդները, և աւելի խորն ու տեւական կերպով:

Ահա ալկոհոլականութեան այս վնասներից մարդկութիւնը հեռու պահելու և նրա դէմ պայքարելու համար, հետազօտող և խորհող անձեր սկսած են շարժիլ և հանրային թշնամու դէմ կռիւ մղել:

Կռիւը շարունակւում է ամէն տեղ, բոլոր ազգերու մէջ, կազմւում են հակալկոհոլական ընկերութիւններ, հրատարակւում են հակալկոհոլական թերթեր ու գրքոյկներ, տեղի են ունենում դասախօսութիւններ հասարակական վայրերում, դպրոցներում, զօրանոցներում, բանտերում, հիւանդանոցներում, զգաստարաններում, տներում և նոյն իսկ գինետներում . . . : Բաց են անում ժուժկալութեան նպաստող ընթերցարաններ, ճաշարաններ, զբօսավայրեր, գիշերային դպրոցներ և մասնաւոր հիւանդանոցներ, և կազմակերպում են միջազգային կոնգրեսներ:

Մինչև ցարդ տեղի են ունեցած եօթ միջազգային կոնգրէսներ, վերջինը այս տարի Պարիզում գումարուեց: 1897 Սեպտեմբերի 2 ին « ոգելից ըմպելիների չափազանցութեան դէմ » գումարուած VI միջազգային կոնգրէսում Դոկտ. Լեգրէնի առաջարկութեամբ ընդունեց մի VII հակալկոլական կոնգրէս գումարել 1899 թւին Պարիզում, Ապրիլ ամսի 4 ից մինչև 9:

Ահա այդ կոնգրէսի մասին ուզում եմ համառօտ տեղեկութիւններ հաղորդել և զանազան ազգերի ներկայացուցիչների կողմից խօսուած ճառերից քաղուածներ անել:



1899 Ապրիլ 3 ին Պարիզում գումարուեց եօթներորդ միջազգային կոնգրէսը հասարակաց կրթութեան նախարարի պատուաւոր նախագահութեան տակ, և այս կոնգրէսում վճռաբանութեան ենթարկուած առաջին խնդիրն եղաւ նրան յատկացնելիք անունը, համաձայնեցան և անունը դրին « Ոգելից ըմպելիների չափազանցութեան դէմ կոնգրէս »:

Վիլ-Էվրարի յիմարանոցին (Asile de Ville Evrard) գլխաւոր բժիշկ և Ֆրանսայի հակալկոհոլական ընկերութեան նախագահ Դոկտ. Լեգրէն որու այս կոնգրէսի կազմակերպութեան պատիւն է պատկանում, կատարեալ ժուժկալական ընկերուհիներով օտարներից յետ մնացած լինելու վախը յայտնած է: Կարժէր ականատես լինել այն բուռն եռանդին, որով օտար ներկայացուցիչներ, մանաւանդ յիշում եմ Շուէյցարիայից Պրոֆէսոր Ֆորէլին՝ այս ժուժկալութիւնը գրաւում էին, զգացնել տալու համար թէ ֆրանսական չափաւորութիւնից որքան քիչ գոհ էին:

Ռումանիայից՝ Պրոֆէսոր Թիրոնի կողմից առաջարկուած « Ոգելից ըմպելիների չափազանցութեան դէմ կոնգրէս » խորագիրը վերջնականապէս ընդունուած է այս կոնգրէսի համար:

Հակալկոհոլականութեան առիթով կատարուած յառաջադիմութիւնները հաստատող մի տեղեկագիր կարդացուած է, որից յայտնում է, որ Կանադայում ալկոլը մի միայն դեղատներում պիտի վաճառուի. Վերին-Կոնգոյում աբսէնթը պիտի արգիլուի և արմաւենի ալկոլ չը պիտի ներմուծուի. Բելգիայում, Սենատի անդամ և նախարար Լըժէօնի

(Lejeune) կողմից ոգելից ըմպելիների վաճառման մասին մի օրէնք է հաստատւում. և վերջապէս, Թիլոն մեզ ցոյց է տալիս, որ Ռումինիա՝ մեծ ազգերի ենթարկւած վտանգի մասին անկասկած լինելով՝ ֆրանսական հասարակութեան նման մի հակալկոլական զրութիւն է ստեղծած։

Ֆրանսիայում, չարիքի դէմ մղւած կռւում, հասարա-կական ոյժը հակալկոլական ընկերութիւնների կողմն է։ Պու-անկարէի շնորհիւ հակալկոլական ուսուցումը պաշտօնապէս նախակրթարանների և վարժապետանոցների մէջ մտցւած է։ Խորհրդարանում Ռամբո (Rambaud) առաջարկած է դըպ-րոցներում մանկական հաւաքումներ կազմակերպել, որտեղ դասախօսութիւններ կը կարդացւեն։ Պարզ և պատկերա-զարդ բրօշիւրների ցրւումը զօրեղապէս նպաստում է պրօ-պագանդային։

Այս կոնգրէսը մի նոր դարագլուխ է բաց անում, ամ-բողջ աշխարհ պէտք է մասնակցի, մանաւանդ մեզ օգնա-կան լինելու գործը կանանց է պատկանում։ Օրինակը կինը պէտք է տայ, իր ամուսնուն տանը պահող՝ բարի ընկեր պէտք է լինի։ Այսպէս ցեղի փրկութեան և մարդկային ընդ-հանուր ժառանգականութեան համար մենք բոլորս մի ող-ջամիտ կռիւ մղելու ենք։

Պարոն Բիւիսոն (Buisson) ալկոլականութեան դէմ մղւած կռւում երիտասարդութեան գերը ցոյց տալով և նրանց հրաւէր կարդալով, որոնք մարդկութեան ապագան, յոյսը և վաղորդայնը կազմում են, ասում է. «Երիտասար-դութիւնը, մեր փորձածից աւելի լաւը պիտի անէ. առանց



նրա ոչ մի յոյս չկայ, ոչ ալկոլականութեան դէմ մղւած կռւում և ոչ էլ բարոյական և ընկերական դաստիարակու-թեան համար։ Ընդհանուր կերպով, մենք գիտում ենք կըր-թւած երիտասարդութեան, որպէս զի իրա կարգին դիմէ անմշակ երիտասարդութեան, և որը կը կատարէ մի շատ ազդեցիկ պրօպագանդա։ Սակայն խնդիրը բարդ է. որովհետև ալկոլականութեան դէպքերը այն հրապոյրներից են ծնւում, որոնց շատերը վատ չեն։ Իմ մասին, ես չեմ կարծում որ այնտեղ լինի այն զւարճութիւնը, որ արժէ մի գաւաթ լաւ ջուրի։ Ուրեմն ալկոլ ընդունելու հաճոյքը չէ, որ նրան այն-տեղ ձգում է։ Այլ մի քիչ աւելորդ շնորհ վայելելու, իրա համար մի բան անելու, մի միայն ինքնիրան տէրը լինելու, ազատապէս շնչելու և հանգստանալու փափաքն է։ Ա՛րդ, աշխատութեան կապանքից ազատւելուց յետոյ, ճաշելու ժամանակ նրանի՛ց մեզ մատուցանում են փոքր բաժակի ձևի տակ։ Ինչպէ՞ս պիտի կարողանանք փորձութեան դի-մադրել, մանաւանդ նրանք, որոնք տխուր կեանք ունին։»

«Ալկոլականութիւնը ընկերականութեան հետ շղթա-յւած է։ Հաւաքւում են մի վայրում, որտեղ իրանց ընկեր-ներին պատահում են, որ տեղ կեանքի դառնութիւնը մոռ-նալով խօսակցում են, տնից հեռու, որը իրականութեան տանջանքներին է միայն յիշեցնում։ Մինչև որ հեշտ հաւա-քումների սրբիչ կեդրոններ գոյութիւն չունենան, և որտեղ չը տեսնեն խնամակալութիւն և պաշտպանութիւն, պիտի միշտ յաճախեն գինետուն։ Սրանից եզրակացնում եմ, որ երիտասարդութեան պաշտօնը միայն քարոզութիւն անել չէ։

«Մի գինեմոլի մի՛ ասէք, ասում էր Լալիս, թէ մի անկիրթ է, այլ, այս մարդի մէջ ես մի անկիրթ եմ»։ Իր եղբօր այս սխալ վիճակի մէջ խորասուզուելուց արգիլելու համար, բոլոր սրտով պէտք է կռուել։ Համոզուեցէք, որ այս տեսակէտից օգտակար գործ պիտի անէ, եթէ երիտասարդը մի դժնդակ չարիքի է ենթարկուած։»

Վտանգը սրանից է գալիս։ Ուսանողները՝ Բուրժուայի զաւակներ՝ երբոր կը գնան արուարձաններում հակաբարոյական գործեր տեսնելու և ժուժկալութիւնը գրուատելու, գործաւորը նրանց ցոյց է տալու աղքատութեան մէջ իսկ նոյն օրինակ իրա անփայլ գոյութեան թշուառութիւնները, և ուսանողները քաղաք մտնելով, ի՞նչ պատասխանելիս չը պիտի գիտնան նրանց, որոնք կեանք, լոյս և անդորրութիւն են պահանջում։»

«Ի՞նչ պատասխանել։ Ամենից լաւը, մեր ընկերական կազմակերպութեան անարդարութիւնը ճանաչել է, յետոյ երթալ յաճախ տեսնել թշուառներին, օրինակով նրանց ցոյց տալ թէ կարող են ալկոլից հրաժարուել, և թէ ժուժկալութիւնը չի արտաքսում ուրախութիւնը։

«Միևնոյն ժամանակ կը պարտաւորուիք նուազ խստապահանջ լինել, ընկերական խնդրի մասին ձեր կարծիքները շատ կը փոխուին, երբ կը տեսնէք, որ թշուառին կեանքը հեռու է այն լինելուց, ինչ որ կարող է պահանջել։

Ալկոլը հարուածելուց առաջ, միշտ օգտակար է, ոչ միայն նրա վտանգները մատնանիշ անել, այլ և նրա անօգտակարութիւնը։ Պարիզի բժշկական դպրոցի օգնական—Պրո-



ֆեսոր Գլէյ, այս մասին շատ նշանաւոր մի զեկուցում արած է, որից հետևեալ մասերը քաղում ենք։

«Սակայն ալկոլը շատ թանկ մի սնունդ է, չէ տալիս այն օգուտը, ինչ որ տալիս են իւղը և ածխային նիւթերը (շաքար եայլն) արտադրած օգուտին համեմատ, կաթից երեք անգամ, իսկ հացից ութն անգամ աւելի թանկ արժէ։»

1895 թուին Baratynski, Պետերբուրգի բժշկական էնստիտուտում հետևեալ կարևոր փորձերը կատարած է։ Մի քիչ ալկոլ ընդունող ապանիներ գրգռման մի շրջան են ներկայացնում։ Բարատինսքի ցոյց է տուած, որ խմիչքը գրգռման վրայ չէ, այլ բարձր կենտրոնների անդամալուծութեան վրայ։ Իսկապէս ուղեղային կիսագնդից զրկուած և իրանց վերքից առողջացած ապանիների վրայ, ալկոլը իսկոյն անդամալուծական երևոյթներ յառաջ է բերում։»

## ԱՌԱՆՑ ԱԼԿՈԼԻ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԴԱՐՄԱՆՈՒՄԸ

Drysdale.— «Առողջ վիճակում ոգելից ըմպելիներ գործածելու օգտակարութեան և հիւանդութիւնների մէջ նրանց անհրաժեշտութեան մասին հասարակութեան ունեցած հաւատքը միայն այն ժամանակ կարելի պիտի լինի խախտել, երբոր յաջողուի միանգամայն նրանց վտանգների մասին բժիշկներին համոզել և երբ դեղ նրանց անզօրութիւնը ցոյց տալ։ Արդ, այդ արդիւնքին հասնելուց առաջ-

ւէն շատ հեռու ենք գտնւում. 1896 թւին Մաղդեբուրգի դատաստանական պալատի առաջ Դոկտ. Հերշֆելդ, նախիչ անձի ենթակայ մի հիւանդի ալկոլ տւած չը լինելու համար դատի ենթարկեց, ընդհանուր դատախազը, հիւանդանոցի բժիշկների յայտարարութեան համաձայն, որտեղ յետոյ հիւանդը փոխադրւած ու մեռած էր, նրա համար անզգուշութեամբ մարդասպանի մի պատիժ պահանջեց։

Սաքսի բժշկական ընդհանուր խորհուրդը և բազմաթիւ հռչակաւոր բժիշկներ պաշտպանելու մասին խորհրդակցելով և դատարանում ամբաստանեալի նկատմամբ նպաստաւոր կարծիք յայտնելով, Դոկտ. Հերշֆելդ անպարտ արձակւեց։ Այս դէպքը միանգամայն ցոյց է տալիս, թէ՛ ի նպաստ ալկոլի նախապաշարման ոյժը և թէ՛ հակառակ կարծիքին ոյժը։ Տիեզերահռչակ ճանապարհորդ Դոկտ. Նանզէնի յայտարարութեան համեմատ, բևեռային կլիմաների տակ ալկոլի նոյն իսկ բժշկական գործածութիւնը բնաւ անհրաժեշտ չէ և միշտ վտանգաւոր է։ Եւ բարեխառն կլիմաների տակ միթէ միևնոյն բանը չէ՞։ Մագնիւս Հիւսի, Լանսէրոյի, Բ. Վ. Րիչարդսընի և Նօրման Քէրի աշխատութիւնները ցոյց են տւած զանազան հիւանդութիւնների պատճառաբանութեան մէջ ալկոլի պատկանած մասնակցութեան բաժինը, և այս իրողութիւնների առաջ, կարելի է հարցնել թէ բժիշկները ալկոլի իբր դեղ անխնայ գործածութեան մէջ մի իրական անխոհեմութիւն ցոյց տւած չե՞ն. . . ։ 1872 թւին Saturday Review թերթում մի յօդւած տեսնւեց որը բժիշկներին ամբաստանում էր իրանց հիւանդների մօտ



անժուժկալութեան ճշմարիտ ունակութիւններ ստեղծած լինելու համար, և այս առիթով բարձրացած բանակռւում սատախօսներով կարողացան հաստատել՝ թէ մի բաւական չափով ալկոլ ընդունող տենդոտ հիւանդների մօտ մահաթիւը աւելի բարձր է, միայն կաթ տւած հիւանդների մահաթւից։»

«1876 թւին կազմւեց Անգլիական Բժշկական Ժուժկալական Միութիւնը (British medical Temperance association), այսօր հազարաւոր անդամներ ունի, ալկոլին իբր դեղ գործածութիւնը չափաւորելու կամ նոյնիսկ բոլորովին դադրեցնելու գաղափարին յայտնի յառաջդիմութիւններ արած լինելուն ճշմարիտ մի նշանն է այս։ Այս նոր դրութեան առաջին արդիւնքը, հիւանդանոցների համար յառաջ բերած որոշ խնայողութիւնն է։ Պարքըրի, Գօտնէրի, Նօրման Քէրի, Բ. Վ. Րիչարտսընի, գործունէութեան տակ, զանազան հիւանդութիւնների դարմանման մէջ ալկոլի գործածութիւնը Լօնտօնի հիւանդանոցներում աստիճանաբար պակասեցնում են. հին գաղափարին երկար ժամանակ հաւատարիմ մնացող միայն Saint-Georges հիւանդանոցում, տիֆից մեռնողներին թիւը միւս հիւանդանոցներից շատ աւելի բարձր է, իրաւունք ունինք հարցնելու, թէ Անգլիայում և Եւրոպայում ճարակած ալկոլամոլութեան ճշմարիտ համաճարակը մասամբ չէ՞ կապւած դարմանման այն վատ սովորութեան, որ մի քանի տարի առաջ, բժիշկների մեծագոյն մասը հետևում էր։ Այն յիմարանոցներում, որտեղ հիւանդների համար ոգելից ըմպելիների գործածութիւնը և

նրանց իբր դեղ մատակարարելը բոլորովին դադրեցրած է, աւելի արագ և աւելի տեւական բարելաւութիւններ ստացւել է. մի գործնական միջոց է այս, որ Գերմանիայում և Անգլիայում հետզհետէ տարածւում է։ Նոյն իսկ գարեջրի գործածութիւնը արգիլւած է։ Անգլիացի և Շուէյցարիացի բազմաթիւ ֆիզիօլօգիայի պրօֆէսօրների կարծիքը միենոյնն է հաստատում, ինչ որ փորձառութիւնը բժիշկներին ցոյց է տւած։ Վերջապէս Լօնտօնի Ժուժկալական հիւանդանոցի (London Temperance Hospital) վիճակագրութիւնները ցոյց են տալիս, որ առանց ալկոլի օժանդակութեան կարելի է դարմանել և բուժել գրեթէ բոլոր հիւանդութեանց մեծագոյն մասը, այս հիւանդանոցին բժիշկները, որ 24 տարւայ ընթացքում 13,984 հիւանդներ են դարմանած, միայն 24 դէպքում ալկոլ տւած են։ Հետզհետէ ալկոլի գործածութիւնից հրաժարւում և սկսում են կասկածել նոյն իսկ ամենափոքր չափի օգտակարութեան վրայ։ Հօրսլէյի, Հ. Թօմսընի, Պիրս Գուլդի վկայութեանց համեմատ, վիրաբուժական հիւանդութեանց մէջ ալկոլի գործածութիւնը մեծ մասամբ անօգուտ ժամանակ վատնել է, և յաճախ վնասակար է։»



## ԼՕՆՏՕՆԻ
## ԺՈՒԺԿԱԼԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ ԴՈՐԾԸ

Ridge.— «Այս հիւանդանոցի բժիշկները ու վիրահատները միմիայն ալկոլ չը պարունակող դեղեր են գործածում։ Այս հիւանդանոցը 24 տարի է գոյութիւն ունի։

«Ժամանակաւ բժշկութեան ամբողջ գործնականութիւնը այս երկու բառերի մէջ էր ամփոփւում, — ալկոլական ոգեւորութիւններ— (Stimulations alcooliques)։ Ոչ միայն հիւանդութեան ընթացքում ալկոլ էր գրւում, այլ և նրա զանազան խառնուրդները ապաքինման նպաստաւոր նկատւում էին։ Ալկոլի իբր դեղ ունեցած արժէքի խիստ չափազանցւած այս հաւատքը, աղետալի հետեւանքներ ունեցաւ։ Այդ ժամանակ ժուժկալութեան բարեկամները ձեռնարկեցին փորձերով ապացուցանել թէ ծանր հիւանդութեանց և կատարեալ առողջութեան ժամանակ կարելի է ալկոլ չգործածել։

«Արդ, 1873 թւին Լօնտօնում 17 անկողնով մի հիւանդանոց հիմնեցին։ 1881 թւին անկողինների թիւը 50 ի բարձրացաւ, յետոյ 1885 թւին 86 ի։ Վերջապէս 1898 թւին մի 87 րդ. անկողին եւս հաստատւեց։

«Ամեն տեսակ հիւանդներ ընդունւած են։ Այսուամենայնիւ 15274 հիւանդների վրայ մահաթիւը 7% ից ցած է եղած։

«Այս անհերքելի յաջողութեան պատճառով, ժուժկա-

լակման ուրիշ հիւանդանոցներ ևս հաստատուած են։ Ուրեմն շօշափելի և ակնյայտնի ապացոյցներով հաստատուած է, որ դեռ այսօր հիւանդների տրուած ալկոհոլական խմիչքների մեծ քանակութիւնները բոլորովին աւելորդ և հաւանականաբար շատ վնասակար են։

## ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԼԿՈԼԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Faidherbe.— 1° Ալկոլը գործաւորներին անօգուտ է։ Պարքըրի, Ռիչարսոնի, Դէստրէի և ուրիշների կողմից կատարուած բազմաթիւ փորձերը ապացուցած են, որ ալկոլը, խմողի ոյժերը աճեցնելուց շատ հեռու, մի վաղանցիկ գրգռութիւն է տալիս, աշխատելու ընդունակութիւնը բնաւ չէ աւելացնում և յոգնածութեան զգայնութեան երեւոյթը փութացնում է։ 2° Ալկոլը գործաւորին վնասակար է։ Աշխատողին վնասակար է, որովհետև օրգանական մաշումը փութացնում է և ծերութիւնը կանխում, որտեղ ֆիզիքական անկումը, աշխատողին՝ առօրեայ աշխատանքի հարկաւոր ոյժերի անընդունակ է դարձնում. որովհետև, արեան շրջանառութեան և նեարդային դրութեան վրայ նրա ունեցած ազդեցութիւնը, զանազան վարակումների ծանրակշռութիւնը և կարեւորութիւնը զիլացնում է, որոնց գործաւորը ենթարկւում է, հաւաքական և անհատական առողջապահութեան թերութեան պատճառով. որովհետև, նրա ու-



շադրութեան կարողութիւնը և նրա ֆիզիքական էներգիան նւազեցնելով, աւելի հեշտ կերպով նրան ենթարկում է ներկայ մեքենականութեան ընծայած վտանգների բազմաթիւ պատճառներին. վերջապէս, որովհետև գործաւորը իւր թոշակի մի մասը աւելորդ ծախսերի վատնելու անձնատուր լինելով, նոյն համեմատութեամբ ևս բանւոր սննդառութեան և սովորական պարէնի յատկացուած բաժինը պակասում է։

1003
10423

## ԱԼԿՈԼԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՐՔՈՒՄԸ

Bienfait (Լիէժից) կարգաւ քննում է զանազան նախապաշարումները, որոնք յաճախ հակալկոլական գործնէութեան անյաղթելի արգելք են հանդիսանում։

1° *Ալկոլը սնուցողական է՞*։— Ո՛չ, նրա՝ մարսողութիւնից յառաջ է գալիս ստամոքսային մկանունքների վաղանցիկ և աղէտալի մի գրգռում, որովհետև, ալկոլը ստամոքսը գրգռելուց յետոյ անզգայացնում է, որովհետև, արիւնը դէպի մորթը քաշում և ստամոքսային հիւթի ներգործութիւնը արգիլում է։

2° *Ալկոլը ախորժաբեր է՞*։— Ո՛չ, բայց ստամոքսային մի գրգռութիւն է պատճառում, որը յառաջ է բերում մի զգայութիւն, քաղցածութեան պատրանքը։



Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3° Ալկոհոլը սնունդ է՞ — Ո՛չ, նա չի համապատասխանում այս սահմանումին և արտադրած ջերմութիւնը չի ծառայում ոչ իրական ջերմութեան և ոչ մկանային գործնէութեան։

4° Ալկոհոլը տաքացնում է՞ — Ո՛չ, միայն դէպի մորթը մի արեան խուժում տեղի է ունենում և ընդհանուր սառչում։

5° Ալկոհոլը ոգեւորող է՞ — Ո՛չ մի պարագայում, ոչ ֆիզիկական, ոչ մտաւորական։

6° Ալկոհոլը վարակումից պաշտպանում է՞ — Ո՛չ, մարմինը ենթակայ է անում փոխանցող հիւանդութիւններ ստանալու։

7° Առանց ալկոհոլի չէ՞ կարելի ապրել — Այս մի սխալ կարծիք ու նախապաշարում է, որ բազմաթիւ դէպքերով ջրւում են։

8° Ալկոհոլը երեխաներին օգուտ տալիս է՞ — Ո՛չ, երեխաներին բնաւ ալկոհոլ տալու չէ։

9° Ալկոհոլը չէ՞ արգիլում երկայնակեցութիւնը — Անվիճելի վիճակագրութիւնների համեմատ կեանքը կարճեցնում է։



## ԵՐԿԱՅՆԱԿԵՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԼԿՈԼԱՄՈԼՈՒԹԻՒՆ

Մանչեստրից Դոկտ. Whyte ընդհանուր մահաթիւը, կատարեալ ժուժկալական մի ընկերութեան անդամների մահաթիւի հետ բաղդատելով, ցոյց է տալիս, որ ժուժկալների համար աւելի հաւանականութիւն կայ անժուժկալներից 9,43 տարի աւելի երկար ապրելու։

Այս մասին Drysdale աւելի պերճախօս կերպով տխուր իրականութիւնը ցոյց տալով, ասում է. «Լիէբիգի կարծիքը սխալ է. ալկոհոլը սնունդ չէ՛։ Նա միայն թշուառութիւն է յառաջացնում։ Ոգելից ըմպելիների կատարեալ մերժումը միայն երկայնակեցութեան նպաստում է։ Ընդհանուր արձանագրութեան 45 րդ. տեղեկագրի համեմատ, եթէ ողջամարդկանց միջին մահաթիւը 1000 վերցնի, անգլիական եկեղեցու անդամների մահաթիւը լինում է միայն 556, պանդոկապետներինը և գինեվաճառներինը 1,521, մինչդեռ պանդոկների և գինետների ծառայողների մահաթիւը 2,205 մի ահագին թիւի է բարձրանում։ 1876 թւի գործողների օրագրութեան ընծայած տեղեկութիւններից երեւում է, որ արդէն ուժեղ մարդկանց մէջ հաշուած ծառայների մահաթիւին չափազանցութիւնը 68 % է։ Դոկտ. Նորման Քէր 1875 թւին յայտնում էր, որ Անգլիայում, աղքատների տներում և հիւանդանոցներում մեռնողների երրորդ մասը ալկոհոլն է պատճառում։ 1898 թւին Kent՝ ժուժկալական

ընկերութեան քարտուղարը՝ ցոյց էր տալիս, որ շատ ալկոլ գործածող 2,201 աղքատ բնակիչների մահաթիւը 25 $^{0}/_{0}$ եղած է, մինչդեռ նոյնպէս աղքատ, բայց աւելի ժուժկալ 3,601 բնակիչների մահաթիւը միայն 17 $^{0}/_{0}$ եղած է։ Լոնտոնի ժուժկալական հիւանդանոցում, որտեղ ալկոլը նոյնիսկ դեղերի բաղադրութեան և պատրաստութեան մէջ չէ մանում, 13,984 հիւանդի վրայ մահաթիւը 962 եղաւ, այսինքն 6,88 $^{0}/_{0}$, միւս հիւանդանոցներից շատ ցած. 1897 թւին, ինչպէս Sir Benjamain Richardson ասած էր, հիւանդներն էլ, առողջ մարդկանց նման, բնաւ պէտք չունէին գինու, գարեջրի կամ արաղի։

«Վերջապէս, կեանքի ապահովագրական ընկերութիւնները խոստովանում են, որ մահացուցակների համեմատ, մեռնողների թւին միայն 70 $^{0}/_{0}$ը ժուժկալների բաժանմունքները տալիս են։ Գալով վտանգների դէմ ապահովագրական ընկերութեանց, իրանց ժուժկալ անդամների համար 10 $^{0}/_{0}$ մի զիջողութիւն յանձն են առնում։

«Ուրեմն, փորձը ապացուցանում է, որ ոգելից ըմպելիներից ժուժկալութիւնը երկայնակեցութեան նպաստում է, մինչդեռ նրանց նոյնիսկ չափաւոր գործածութիւնը, առողջութեան վնասակար է և կեանքը կարճեցնում է։



## ԱԼԿՈԼԻ ԱՃԵՑՈՒՆ ՍՊԱՌՄԱՆ ԵՒ ԼՈՒՍՆՈՏՈՒԹԵԱՆ, ԱՊՇՈՒԹԵԱՆ ՈՒ ԽԵԼԱԳԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՐԱՏԵՒ ԱՒԵԼԱՑՄԱՆ ՄԷՋ ՄԻ ՈՒՂՂԱԿԻ ԱՌՆՉՈՒԹԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ՞

David (Չիկագօից, Ամերիկա).— «Վերևի հարցման առանց վարանելու պէտք է այո՛ պատասխանել։ Բացի սրանից, պարզ քննութիւնը ցոյց է տալիս, որ մարդս որքան աւելի ալկոլ է խմում, այնքան աւելի շուտ ենթակայ է լինում ցրտառութեան և հիւանդութեան, և նուազ ֆիզիկական ու մտաւոր աշխատութիւն կարողանում է կատարել։ Ալկոլը՝ ջրի և սպիտային նիւթերի համար մի զօրաւոր մերձաւորութիւն ընծայելով, խանգարում է արիւնը, վնասում է նեարդային դրութիւնը և հետևաբար նաև ծննդագործական գործարանները։ Ուրեմն պատճառած վնասները ժառանգական են։ Ահաւասիկ այս բոլոր ճշմարտութիւնները հաստատող իրողութիւններ, նախապէս անասունների վրայ կատարուած փորձերը նշանակենք։

«Ալկոլի շոգի պարունակող մի մթնոլորտում թխսուած ձուերից մեծ մասամբ կիսկատար և հիւանդոտ ճուտեր արտադրուած են. և այն շուներից, որոնց ամեն օր բաւական չափով ալկոլ են խմեցնում, այնպիսի լակոտներ են ծնւում, որոնց մեծագոյն մասը ծնւելուց մի քանի օր յետոյ մեռնում են, մնացածները ապրում են լուսնոտներ լինելու համար, և շատ քիչերն առողջ՝ մի չափահաս տարիքի են հասնում։

«Այնասունից մարդիս անցնելով, հետեւեալ իրողութիւնը նկատւում է։ Ուժեղ և ժուժկալ մի կին մի գինեմոլի հետ ամուսնացաւ, որից ունեցաւ հինգ զաւակ, նրանցից չորսը տասն օրից առաջ մեռան, միայն մէկը մինչև 5 տարեկան ապրեցաւ։ Մարդը մեռաւ և կինը նորից ամուսնացաւ, և այս անգամ իրա նման ուժեղ և ժուժկալ մի մարդի հետ։ Նրանից երկու զաւակ ունեցաւ, որոնցից մէկը այժմ չորս տարեկան է և միւսը մի քանի շաբթեւան, երկուսն էլ հրաշալի կերպով առողջ են։

«Կարճ խօսքով, ասում է մի ուրիշ բժիշկ, ալկոլը ձգտում է ատեղծել մշտակայ ազգատուլթիւն, հիւանդութիւն և ոճիր։ Քիչ կամ մեծ չափով ալկոլ խմողներ ե[թ]է ստիպուած են մի միայն իրար հետ ամուսնանալ, նրանց ամբողջ ցեղը առնուազն մի կամ երկու դարում ջնջուելու է. ժուժկալ անհատների հետ միանալով է, որ իրանց ցեղի բնաջինջ լինելուց ազատւում են. սակայն միևնոյն ժամանակ այս կերպով է, որ իրանց երակների թոյնը տարածում են ընկերական բոլոր խաւերում, և աւելի լցնում են բանտերը, ցիմարանոցները և հիւանդանոցները, քան թէ դպրոցները և եկեղեցիները, և հաւասարապէս ամէն օր թերթերի սիւնակներն են լցնում, իրանց անառակութեանց, գողութեանց, մարդասպանութեանց և անձնասպանութեանց պատմութիւններով, նոյնիսկ մեր քրիստոնէական կոչած քաղաքակրթութեան ծոցում։ Իսկապէս, հանրային զիտակցութիւնը տկարացած պէտք է լինի, ամենատարրական ողջմտութիւնը՝ նոյնիսկ ալկոլի ներգործութեամբ՝ վատթարա-



ցած պէտք է լինի, որպէս զի մի այսպիսի թոյնի պատրաստութիւնն ու վաճառումը տակաւին արտօնուած լինի, մինչդեռ միւս կողմից, հարկաւոր է լինում զգաստարաններ և բանտերի թիւը շատացնել, այս թոյնի զոհերին այնտեղ փակելու համար։»

ԱԼԿՈԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ
ՈՃՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌՆՉՈՒԹԻՒՆԸ

Barthès ալկոլական ալլասեռման յառաջացրած ոճիրների մասին խօսելով ասում է. «1840 թուականից յետոյ մահերի, անձնասպանութիւնների, մարդասպանութիւնների, սպանութիւնների և ոճիրների թւին աճեցումը տեսնւում է, և միևնոյն ժամանակ, ալկոլական ժառանգականութիւնը իրա աչարկու աւերումները զանազան ձևերի տակ գործում է։ Գինետների թիւը, մահերի, ոճիրների և յանցանքների թւի հետ ուղղակի համեմատութեան մէջ է գտնւում, իսկ ծնունդների հետ խոտորնակ համեմատութեան մէջ։»

Ատենախօսը ալկոլի աւերումները կասեցնող մի քանի առաջարկներ ու միջոցներ ներկայացնելուց յետոյ, աւելացնում է. «Անհատական նախաձեռնութիւնը, ալկոլականութեան դէմ ամենազդեցիկ և ամենափրկաւէտ զէնքն է։» Եւ կոնգրէսին առաջարկում է հետևեալ որոշումը արձակել. «Կոնգրէսը նկատելով, որ նախակրթարաններով, կո-

լէժներով և Լիսէներով ալկոլականութեան դէմ մղւած կռւում ձեռք բերւած արդիւնքները գոհացուցիչ են, որոշում է, որ հակալկոլական ուսուցումը պարտաւորիչ լինի չափահասների դասընթացներում, զինուորական, ճարտարագործական, երկրագործական և վաճառականական դպրոցներում, նոյնպէս կառավարական մեծ դպրոցներում և ֆրանսայի բոլոր համալսարաններում։»

## ՎԻՐԱՒՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ ԱԼԿՈԼԻ ԴԵՐԸ

Ալկոլը նոյնիսկ վայրկենական ներգործութեամբ անհատի և ընկերութեան համար դիպուածների ու վտանգների մի անսպառ աղբիւր է։

Thomas Monley այս մասին բազմաթիւ եղելութիւններ և վիճակագրութիւններ թւելով, գլխաւորապէս հետևեալ երեք կէտերի վրայ ծանրանում է։

1° Ալկոլականութիւնը ուրիշներին մահ կամ վէրք է պատճառում։

2° Ալկոլականութիւնը արբեցողին մահ կամ վէրք է պատճառում։

3° Ալկոլականութիւնը վէրքերի և վիրահատութիւնների դէպքերում հիւանդութիւնը ծանրացնում է։



## ԱԼԿՈԼԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԻՒՂԵՐՈՒՄ

Baratier իրաւամբ յայտարարում է, որ ժամանակաւ գիւղերում ալկոլականութիւնը գոյութիւն չունէր, գիւղացիք յաճախակի քաղաքներ երթևեկելով խմելու վատ սովորութիւնը ստացած են։ Ատենախօսը առաջարկում է գիւղերում ևս կազմակերպել հակալկոլական ընկերութիւններ։

## ՆՈՐՄԱՆԴԻԱՅՈՒՄ ԱԼԿՈԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԻ ՄԷՋ

Brunon յայտարարում է, որ «ալկոլականութեան յառաջդիմութիւնները Նորմանդիայում և գործաւոր դաստակերտներում հաստատուած իրողութիւններ են։

— Զանազան պարագաներում, կանայք տղամարդերից աւելի են խմում։

— Իրերի այս դրութիւնից յառաջացած ընկերական և ճարտարարուեստական հետևանքները աղէտալի են։

— Եթէ իրերի այս դրութիւնը չփոխւի, ազգային վաճառականութիւնը, ճարտարարուեստը և նաւագնացութիւնը պիտի դադրին։

— Աշխատութեան օրերը պակասում են։ Շատ գործաւորներ շաբաթը միայն հինգ օր աշխատում են։

— Աշխատութեան որակը ցածանում է։ Գործաւոր-

ների խմացականութիւնը, արուեստական ճարտարութիւնը և մարմնական ոյժը պակասում են։

— Թաշակների արժէքը բարձրանում է և գործարանատիրոջ շահերը նուազում են։

— Օտար մրցումը միշտ մեծանում է։»

Արուեստի ալկոլականութեան դէմ, Դոկտ. Բրինօն, ամբոխի դաստիարակութիւնից բացի, ուրիշ միջոց չէ տեսնում։

## ՀԱՑ ՃԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԽՄԵԼՈՒ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Bonne (Գերմանիայից).— «Արդի ընկերութեան ամենամեծ վէրքերից մէկը այն անհրաժեշտութիւնն է— նոյնիսկ իրանց արհեստի պահանջած անհրաժեշտութիւն— որի պատճառով բազմաթիւ անձեր ենթարկւում են չափազանց ոգելից ըմպելիներ գործածելու։ Յետոյ թւում է այն բոլոր արհեստները, որոնք մի կերպով պարտաւորեցնում և ստիպում են խմելու, և առաջարկում այլևայլ միջոցներ։

Գերմանիայում բնակչութեան տասնչորրորդ մասը ալկոլի ճարտարարուեստով է զբաղւում։ Այս մարդկանց մեծագոյն մասը ժուժկալութեան բարեկամներ են, սակայն ճակատագրապէս անժուժկալներ են դառնում, իրանց արհեստում ստացած վատ սովորութիւններով։



Վտանգը կանխելու համար իբր բարոյական միջոց՝ օրէնքները և կարգապահական անօրինութիւնները ոչինչ արժեն։ Հեղինակը առաջարկում է Նորին Մեծութեան Գերմանիայ Կայսեր, վերատպել և քահանաներին ու պաստօրներին ցրուել ամերիկացի Baird ի Հակալկոլական Շարժում հեղինակութիւնը։ Այս միջոցով ամբոխը լուսաւորելով և նորա գիտակցութիւնը զարթնեցնելով, գուցէ պիտի յաջողւի չարիքը արգիլել։

## ԱԼԿՈԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Աշխատութեան պայմանների համեմատ, ալկոլականութեան աւելացած լինելու մասին խօսած են Բելգիայի ներկայացուցիչը Vandervelde և Մոսկուայից D. A. Drill։ Առաջինը, ալկոլականութեան սարսափելի աճեցումը վերագրում է, պակասաւոր սննդառութեան, բնակութեան վատ պայմանների և մանաւանդ բարոյական դաստիարակութեան անբաւականութեան. իսկ վերջինը, մեղադրում է ուժասպառութիւնը, ձանձրոյթը, նուազ առողջապահիկ բնակարանները, վատառողջ սննդառութիւնը և ոգեկան անբաւականութիւնը։

Vandervelde ի միջի այլոց ասում է. «Մատնանիշ են անում, որ ալկոլը, իբրև տնտեսական սարսափելի հանգամանքներում գործաւորին հարկաւոր չէ դառնում. սառ-

գի, ալկոլը չէ տաքցնում, մտաւոր կարողութիւնները չէ սրում, չէ սնուցանում, յոգնած մարմինը չէ զօրացնում։

«Ճարտարարուեստի հետեւող գործաւորների զանազան կարգերին քննութեան են ենթարկած, որոշելու համար՝ թէ նրանցից ո՞րն աւելի ալկոլ է սպառում և ո՞րն նուազ։

«Այս քննութեան արդիւնքները հետեւեալներն են.— երկրագործ դասակարգից աւելի բարձր վարձք ստացող, սակայն համապատասխան բարոյական և մտաւոր զարգացում չունեցող ճարտարարուեստի գործաւորների մօտ, ալկոլի գործածութիւնը իւր ծայր սահմանին է հասնում։ Մանաւանդ, այս այսպէս է տաժանելի, զարշելի և վտառողջ արհեստներում։ Ալկոլի հակումը զօրեղանում է «չար օրինակի փոխանցութեամբ, կապելաների հրապոյրով, գործ յանձնողների մեղսակցութեամբ, գիօչու (geniévre) պարգևներով կամ վճարներով, հաւաքոյթներով, ընկերութիւններով, խաղերով, խմիչք կոնծելու միակ նպատակով կազմուած մրցութիւններով։»

Սակայն, այն գործաւորների մօտ որոնց աշխատանքի օրը նուազ երկար է, վարձքը աւելի կանոնաւոր և մտաւորական մակարդակը աւելի բարձր, ալկոլի օգտակարութեան նախապաշարումները անհետանում են։ Այս գործաւորների թիւը հետզհետէ աւելանում է, պրօլէտարիայի կազմակերպութեան յառաջադիմութեան և ճարտարարուեստական տէխնիքայի կատարելագործութեան համեմատ։

Drill Մոսկուայի գործաւորների միջև ալկոլականութեան տարածելու մասին ասում է. «Բացի օրգանիզմի



վրայ ժառանգականութեան ազդեցութիւնից, թէեւ եւ ենթակայական երեւոյթները, օրինակ, յուզումները, ուժասպառութիւնը, ձանձրոյթը, և այլն, որոնք մարդկային ոյժերը տկարացնում և մղում են ալկոլ գործածելու, որը միաժամանակ նրանց զօրեղացնում է։ Մեքենականութեան չափազանց զարգացումը, գործաւորի ուժասպառութեան պատճառ է դառնում։ Գործաւորները բոլէապէս մի քիչ ոյժ ստանալու համար ալկոլ խմում են։ Սրանք և ուրիշ գործաւորներ, երբոր աշխատանք չեն գտնում, ալկոլամոլների գլխաւոր մասն են կազմում։

Հեղինակը գործաւորների և մանրավաճառների կեանքի վրայ ուշադրութիւն է հրաւիրում։ Նրանց բնակարանները, որոնց վարձքը բաւական բարձր է, առողջապահիկ բոլոր պայմաններից հեռու են գտնւում։ Այս խեղճ արարածները ուրիշներից աւելի հարկ են վճարում։ Հեղինակը յիշում է գերմանացի Դոկտոր Bomert ի ատենաբանութիւնը։ Այս վերջինը, մի քննութեան մէջ ցոյց է տուած, որ այն գործաւորները, որոնք աւելի լաւ սնած էին և որոնց սնունդը նուազ թանկ էր արժում, ընդհանրապէս նուազ ալկոլ գործածում էին։»

Կառավարութիւնը պարտաւոր է միջամտել, քաղաքացիների բարոյական և ֆիզիքական վիճակը բարւոքելու համար։ Պարտաւոր է լաւ օրէնքներ սահմանել, գործաւորների աշխատութեան վարձքը կանոնաւորելու համար, նրանց վարժութեան համար դպրոցներ հիմնել, մի խօսք, գործաւոր դասակարգի կեանքը աւելի հեշտացնելու ջանալ։»

Ալկոհոլականութեան այս ծաւալումից ու վտանգներից ի՞նչ պէտք է եզրակացնել։ Օտար ներկայացուցիչները գրեթէ համաձայն են այս կէտի վրայ՝ թէ փրկութիւնը կատարեալ ժուժկալութեան մէջ է։ Նրանց համար, ալկոհոլականութիւնը առանց պատճառի մի մոլութիւն է։

---

## ԿԱՏԱՐԵԱԼ ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ ԹԷ՞ ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Mrs. Finley (*Տիկին Ֆինլէյ*) *յայտնում է թէ աւելի լաւ է կատարեալ ժուժկալութիւնը ընդունել, քան թէ ոգելից ըմպելիների չափաւոր գործածութիւնը։ Առօրեայ կեանքից վերցրած օրինակներով ցոյց է տալիս, թէ քանի որ այնչափ ամիրներ, այնքան անդարմանելի դժբաղդութիւններ ոգելից ըմպելիների նոյնիսկ չափաւոր գործածութիւնից յառաջ են գալիս, նախապատուելի է խմիչքներից կատարելապէս հրաժարուել, որոնք մեր բանականութիւնը խանգարում են, մեր առողջութիւնը քանդում և ընտանիքը փճացնում։ Շատ աշխատանք ունեցող բոլոր մարդիկ, լինի այն ձեռաց աշխատութիւն կամ մտաւոր աշխատութիւն, աւելի տոկուն են լինում, եթէ արբեցնող խմիչքներից կատարելապէս հրաժարւում են։ Միւս կողմից, ալկոհոլականութիւնը, կատարեալ ժուժկալութեամբ միայն կարելի կը լինի բուժել, արմատախիլ անել. արբեցողների վերականգնումով զբաղուողները այս մասին փորձառու եղած են։ Սակայն մի ազգ*



*կամ մի ընտանիք ալկոհոլականութիւնից փրկելու համար անելիք ամենամեծ գործը, նրանց զգուշացնելն է, որոնք այս մոլութեան մէջ տակաւին առաջին քայլը չեն առած։»*

*Տիկին Ֆինլէի ներկայացրած կատարեալ ժուժկալութեան կանանց միութիւնը* (Women total abstinence union) *իրա ազդուութիւնը արդարացնում է հետևեալ երեք առաջադրութեամբ, որ արժէ նրա մասին խորհել։*

1° *Մենք շատ լաւ կարող ենք մեզ ալկոհոլից զրկել։*

2° *Աւելի քաջառողջ ենք ապրում, եթէ միշտ և ամէն տեղ ժուժկալ ենք լինում։*

3° *Պարտաւորւում ենք արբեցողներին օրինակ լինել, ոչ այնքան մեր խօսքով, որքան մեր վարքով։ Ալկոհոլը կամ լաւ է կամ վատ։ Եթէ վատ է, ինչո՞ւ համար ժամանակ անցկացնել այդքան նենգաւոր մի թշնամու հետ։ Ուրեմն, բոլորովին մերժենք։*

Alice Vickery Drysdale (*Լոնդոնից*) *ասում է այս մասին. «Ալկոհոլը իրա բոլոր ձևերի տակ միշտ մի թոյն է։ Խմորուած խմիչքները, ինչպէս ոգելիցները, օրգանիզմի համար վտանգաւոր են. առողջարանի նշանակելիք նպատակակէտն պէտք է լինի, ընկերութիւնը առաջնորդել ոչ թէ միայն չափաւորութեան, այլ կատարեալ ժուժկալութեան։ Զանազան վայելքներով լիք մեր ընդհանուր քաղաքակրթութեան մէջ, ալկոհոլի գործածութիւնը ներելի չէ. և սխալ մի նմանութեամբ աշխատում են միևնոյն սխալ հողի վրայ դնել արօմատ խմիչքների (թէյ, կաֆէ, և այլն) չափազանցութիւնից գոյացած թեթև անպատեհութիւնները և ոգելից*

ըմպելիների գործածութիւնից յառաջացած ճշմարիտ վը-տանգները։ Ալկոլի նոյնիսկ չափաւոր գործածութեան վե-րաբերեալ մահերի ամենամեծ համեմատութիւնը, այս մասին մեր հետևեալը ուղին ցոյց է տալիս։ Նախ որ, չափաւորու-թեան սահման դնել անհնարին է։ Ապահովագրական ըն-կերութիւնների կողմից պատրաստած վիճակագրութիւն-ները ցոյց են տալիս, որ չափաւոր խմիչք գործածողների մահաթիւը, ժուժկալների մահաթւից միշտ աւելի բարձր է։»

«Գերմանիայում, Ֆրանսայում և Աւստրիայում խե-լագարութեան ամենաուժեղ պատճառներից մէկը ալկոլի գործածութեան մէջ է գտնւում. Հնդկաստանի նման ջերմ կլիմաների տակ, ժուժկալները հիւանդութեանց համար մի շատ զօրեղ դիմադրութիւն ցոյց են տալիս։ Նոյն բանն է պատահում շատ ցուրտ կլիմաների տակ, ինչպէս նոյնը հաստատում է բևեռային բոլոր խուզարկուների փորձա-ռութիւնը։

«Ժուժկալ գործաւորների ընկերութիւնները, նոյնիսկ չափաւոր ոգելից ըմպելիներ գործածող ընկերութեանց ան-դամներից շատ աւելի ցած մի մահաթիւ և մի ախտաւորու-թիւն ներկայացնում են. գինեպանների, նպարավաճառնե-րի, սրճարանի և պանդոկի ծառայողների մէջ մահաթիւը իրա ծայր աստիճանին է հասնում։

«Երեխաների, յղի կամ ծիծ տւող կանանց համար, ոգելից ըմպելիների գործածութիւնը մանաւանդ վտան-գաւոր է, նրանց բացարձակապէս արգիլելու է։ Նոյնիսկ իբր դեղ բնաւ ալկոլ տալու չէ։



## ԱՆԳԼԻԱՅՈՒՄ ԺՈՒԺԿԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Robert (Լոնդոնից). — Այս սկզբունքը կայանում է ամէն տեսակ ոգելից խմիչքների կատարեալ ժուժկալու-թեան մէջ։

«Եօթանասուն տարի առաջ Ամերիկայում և Մեծ-Բրիտանիայում ժուժկալական խմբեր կազմեցին, որոնք աշխատեցին արբեցողութիւնը ջնջել։ Նախաձեռնողների ժուժկալական սկզբունքն էր, միայն գինի և գարեջուր խմել, միւս բոլոր ոգելից խմիչքները մերժելով։ Բժիշկները, դեռ այդ ժամանակ, բոլոր ոգելից խմիչքները վնասակար յայ-տարարելու գաղափարը չէին ունեցած։ Այս պատճառով այդ մասին եղած բոլոր ջանքերն անհետևանք մնացին։

«Նրա շարունակութեան միջոցում, շատ բժիշկների կողմից վերջապէս ճանաչւած և յայտարարւած կատարեալ ժուժկալութեան սկզբունքը, նոր ընկերութեանց ծնունդ տւաւ. այդ ընկերութիւնները իրանց յաջողութիւնը ապա-հովացնող ազդեցիկ կարողութիւնը, այդ սկզբունքից քա-ղեցին։

«Ալկոլը իրա բոլոր ձևերի տակ միշտ վնասակար է։ Ամէն որ նրանից ժուժկալ լինելով զոհ են լինում, և խմելու ոչ ոք այնքան աւելի կարիք չէ զգում, որքան արբեցողների սերունդները։

«Այս բանն է, որ Յուսոյ գունդերին (Bandes de

l'Espérance) այնքան օգտակար է դարձնում, նրանք երեխաներին պահպանում և մաքրում են, նրանց առհաւութիւն ինչ որ էլ լինի, նրանք ժուժկալութեան սկզբունքին անձնուէր մարդիկ են պատրաստում: Խմիչքը պարզաբանուած լինելով, դժւարանում են հաւատալ, որ եթէ մարդիկ չը լուսաւորւեն, ժուժկալ չեն կարող լինել:»

## ԱԼԿՈԼԻ ԴԷՄ ԿՌԻՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Cauderlier (*Բրիւքսէլից*). — *Ի նպաստ ալկոլի այնքան տարածուած նախապաշարումները նկատի ունենալով, հակալկոլական ուսուցումը անհրաժեշտ է դառնում: Զանազան միջոցներով պէտք է հալածել, ուսուցումով, մամուլով, պատկերներով, գումարումներով:*

*«Ժուժկալական ընկերութիւնները՝ երբ ուժերի համախմբում, երբ նախաձեռնութեան կենտրոններ և երբ փոխադարձ նախանձաւորութիւն՝ սքանչելի կազմակերպութիւններ են. նրանք յաճախ հասարակութեան ընտրելագոյն տարրերին միացնում են. նրանց կազմակերպութիւնը միշտ հարկաւոր է, հասարակական կարծիքի և իշխանութեան վրայ ազդելու համար:*

*«Սակագնի բարձրացումը ցորչափ նկատւում է իբր գանձային մի միջոց, որից արդիւնք չը պէտք է սպասել, բացի մաքսանենգութեան աւելացումից, հետևաբար ալկոլականութեան արծարծումից:*



*«Գինետների թւի պակասեցումը սպառման վրայ չէ ազդում: Չարիքը այս կողմից հարուածելը, գրեթէ զուր ժամանակ և ջանքեր վատնել է, որոնք՝ նոյնպէս անստոյգ մի արդիւնքի հասնելու համար շատ մեծ պէտք է լինեն: Այս ուժերը ալկոլի գործածութեան դէմ մղելը աւելի խելօք գործ և աւելի գործնական կը լինէր: Այս բանը պէտք է կանոնաւորել և յաջորդաբար պարտաւորեցուցիչ անել:*

## ՀԱԿԱԱԼԿՈԼԱԿԱՆ ԿՌԻՒԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

L. Marillier *յայտնում է, որ ուսուցիչները և նոյնիսկ ուսուցչուհիները պարտաւոր են դպրոցներում հակալկոլական դասախօսութիւններ անել, ճշդապէս և խորին կերպով հմտանալ ալկոլի օրգանիզմի վրայ ունեցած ներգործութեան: Դպրոցից դուրս էլ իրա դերը տարածել, պէտք է կազմել հրապարակային դասախօսութիւններ, հաւաքումներ, դաշնակցութիւններ և զանազան տեսակ ընկերութիւններ:*

Hercod. — *Ընկերութիւնը ալկոլականութեան չարիքից փրկելու համար, աւելի լաւ է երեխաների վրայ ազդել, քան թէ չափահասների վրայ, և աւելի յաճախ նրանց խելքին դիմելու է, քան թէ զգացմունքներին: Երեխան երբոր դպրոցից հեռանալու լինի, զգոյշ լինի բոլոր այն վտանգների դէմ, որ անժուժկալութեան սովորութիւնները կարող են յառաջացնել: Երեխաներին ուսուցիչը պէտք է զաւա-*

խօսէ, ոչ թէ գրքից մի ուրիշը։ Հակալկոհոլական ուսուցումները որպէս զի արդիւնաւոր լինեն, ուսուցիչը ինքը հիմնովին պէտք է գիտենայ և մանաւորապէս պատրաստուած լինի, երեխաներին հասկացնելու համար թէ՝ ալկոհոլը իրա բոլոր ձևերի տակ օրգանիզմի համար մի թոյն է։

«Ուսուցիչների մէջ կազմուած հակալկոհոլական ընկերութիւնները, մանկավարժական տեսակէտից աւելի մեծ գործ տեսնելու կարելիութիւնն ունին։

«Այս ընկերութիւնները, մի բարերար ազդեցութիւն ունենալու համար, մանաւորապէս ժուժկալ ուսուցիչներից կազմուած պէտք է լինեն, այդ ընկերութիւնները հետևեալ չորս սկզբունքները ընդունելու են։

1° Նրանց անդամների մէջ կազմակերպել մի տեսակ հակալկոհոլական փոխադարձ ուսուցում։

2° Նոր ուսուցիչներին արգիլող միջոցներ ձեռք առնել։

3° Հակալկոհոլական ուսուցման համար աշակերտների թիւը բարձրացնել դպրոցական վարչութիւններին համոզելով, և նրանց ստիպել որ այս միջոցին հետևեն։

4° Այս ուսուցման անհրաժեշտ նիւթեր հաւաքել և գործիքներ ստեղծել (գրքեր, բրօշիւրներ, պատկերներ, և այլն)։

«Այս ընկերութեանց պարտականութիւնը այսքանով չէ վերջանում. նրանք պարտաւոր են վերահսկող կոմիտէներ կազմել, որոնք իրանց արթնութեամբ և գործնէութեամբ, օրէնքի անկեղծ և հաստատ գործադրութիւնը պիտի ապահովացնեն։»



A. Don. — Ուսուցիչը ալկոհոլականութեան դէմ մղուած կռւում մի գործունեայ դեր պէտք է վերցնէ, եթէ համոզուած է, որ դպրոց յաճախող երեխաների և նոյն իսկ դպրոցի համար մի մեծ օգուտ կայ, չարիքի տարածումը և յառաջխաղացութիւնները արգիլելու մէջ։ Երեխու վրայ, նոյն իսկ փոքր չափով, ոգելից ըմպելիների վտանգաւոր ներգործութիւնները պէտք է ցոյց տալ, նրա իմացականութիւնը, նրա յիշողութիւնը և ուշադրութիւնը տկարանում են, եթէ նա ժուժկալ չէ։ Միւս կողմից, ծնողների ալկոհոլականութիւնը, երեխաներին ֆիզիքապէս և բարոյապէս վատառողջ մի ժառանգականութեան է ենթարկում, որը նրանց՝ իրանց ընկերների հանդէպ՝ անխուսափելի մի ստորնութեան է դատապարտում։ Ընտանիքի անժուժկալութեան ունակութիւնները դպրոց յաճախելու գործին վնասում են, որտեղ երեխաներին վատ հագնուած և վատ սնուած ուղարկում են, ոչ թէ ուսուցչի դասերից օգտուելու վիճակի մէջ։

«Միւս կողմից, երեխաներին ըմպելիների մասին առողջապահիկ ողջ ծանօթութիւններ հասկացնել հեշտ է։ Ուսուցչի պարտաւորութիւնը խնդրին անտարբեր չը լինել է։

«Սակայն ուսուցիչը իրա աշակերտներին հակալկոհոլական դասեր աւանդելու համար լաւ պատրաստուած չէ, և յաճախ, զանազան պատճառներով, այդ բանը կատարելու քիչ տրամադիր է։

«Ուսուցիչների ընկերութեանց գերը պիտի լինի միևնոյն ժամանակ լուսաւորել ուսուցիչներին և քաջալերել իրանց պարտականութիւնները կատարելու։ Այս ընկերու-

թիւնները պէտք է կազմէին մանաւանդ ժուժկալ ուսուցիչներից, որովհետև, նախ և առաջ հարկաւոր է խրատածը նախ ինքը անել:

«Հակալկոհոլական ուսուցումը՝ միշտ անկեղծ պէտք է լինի, ուղղելով երեխաների սրտին, քան թէ նրանց իմացականութեան, կամաւոր պէտք է լինի և աւանդուի այնպիսի ուսուցիչներից, որոնք արդէն ժուժկալներ են: Բացի սրանից, դեռ անտեղեակ մի անձի կողմից երեխաների մտքում անճիշտ տեղեկութիւններ դրոշմելը շատ վտանգաւոր կը լինէր: Այս ուսուցումը մի որոշ պարտաւորութիւն չը պէտք է լինի, այլ միւս բոլոր ուսումների հետ (ընթերցանութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, բնական պատմութիւն, առողջապահութիւն, գրաւարժութիւն, քերականութիւն, թւաբանութիւն, և այլն,) խառն լինելու է: Մանաւանդ բարոյական տեսակէտից, որոշ ժամանակամիջոցներում մասնաւոր դասերի առարկայ չը պէտք է դառնայ, այլ առիթներից օգտուելու հոգ պէտք է տանիլ, և այդ հարցի մասին միայն այն ժամանակ պէտք է խօսիլ, երբոր ուսուցիչը կ՚զգայ թէ երեխաների հոգու վրայ պիտի կարողանայ հարկաւոր տպաւորութիւնը յառաջ բերել:

«Դպրոցից դուրս, ժուժկալ ուսուցչի և ուսուցչական ընկերութեանց պարտականութիւնն է, ուրիշ ուսուցիչների մօտ մի ազդեցիկ պրոպագանդա անել և դպրոցական դասագրքերում ալկոհոլականութեան տեսակէտից պատահած սխալ կամ թերի հատուածները նշանակել և նրանք ուղղել տալու համար հեղինակների մօտ աշխատել և ձեռնարկներ



անել: Օգտակար կը լինի այցելել երեխաների ծնողներին և նրանց հրաւիրել ներկայ գտնուել նոյն իսկ դպրոցում տեղի ունեցած գումարումներին, որտեղ պիտի խօսէր հակալկոհոլական հարցի վրայ, նրանց սիրտը գրաւելու եղանակով: Ուսուցիչը, պարբերական հաւաքումների միջոցով պէտք է նաև յարաբերութեան մէջ գտնուի, դպրոցը թողած և ուսում աւարտած իր աշակերտների հետ:»

Ուրեմն, ուսուցչի պարտաւորութիւնն է, դպրոցից սկսած ալկոհոլականութեան դէմ կռիւ մղել: Եւրոպայում և Ամերիկայում երեխային ժուժկալական դասեր աւանդելուց չեն վախենում, և լաւ արդիւնքների են հասել, ինչպէս Բոստոնից Օրիորդ Ջէսի Ֆորսայթ ստորև նշանակում է:

Miss Yessie Forsyth.—Արդէն իր գաղափարները կազմած և իր սովորութիւնները ստացած չափահասների մօտ, ալկոլի դէմ մղած կռւում, մարդս իր լաւագոյն ոյժերը վատնելն այնքան նպաստաւոր չէ, որքան երեխայի մօտ: Աւելի լաւ է նախազգուշացնել, քանթէ բուժել. փորձը ցոյց է տւած, որ ժուժկալութեան ամենաօգտակար գործը երեխաների պահպանութիւնն է: Մեր տրամադրութեան ներքև երկու մէթոտ ունինք, երեխաներից ժուժկալութեան խոստում առնել և ոգելից ըմպելիների մասին նրանց աչքերը բաց անել: Երեխաներից խոստում առնելու մասին զանազան անձերի կողմից եղած առարկութիւնները փուճ են. մի պարզ խոստում է այն, երդումի ձև չունի, միայն նրանց գիտակցութիւնը զօրեղացնում և ամրապնդում է: Էլ աւելի աղայական է ոմանց խղճահարութիւնը,

որոնք չեն ցանկանում երեխաների հոգին վրդովել, ալկոլի մոլութիւնները և չարիքները նրանց յիշեցնելով. այս խղճահարութիւնը՝ երեխու օգուտը չիմանալ նշանակում է, թշնամու դէմ նրան զինաթափ անել և վտանգներին անգիտակից անել նշանակում է։ Ընտանիքի ծոցում չեն կարող երեխաներին լուսաւորելու խնամք տանել և ալկոլականութեան փոխանցումից նրանց զերծ պահել, մանկավարժները և զանազան կրօնքների քարոզիչները, իրանց պաշտօնների բերմունքով բազմաթիւ պարտականութիւններով բեռնաւորուած են և չեն կարող իրանց բոլոր ուշադրութիւնը այս միակ առարկային նուիրել, որը խիստ պահանջում է։ Սրանից հարկաւորում է, երեխաների և չափահասների համար հակալկոլական ուսուցման և պահպանութեան մասնաւոր կազմակերպութիւնների անհրաժեշտութիւնը։

«Լաւագոյն տիպարը մեզ ընծայում են Juvenile Templars ընկերութիւնները, որոնք ուղղակի International Order of Good Templars միջազգային ընկերութեան պատկանում են, որը այսօր բազմաթիւ մասնաճիւղերի բաժանուած 150,000 անդամ ունի. հետեւողների մեծագոյն մասը անգլիախօս երկիրներին է վերաբերում. ընկերութիւնը 1867 թւին Միացեալ-Նահանգներում հիմնուած է, իր վերջնական կազմակերպութիւնը 1874 թւին ստացաւ։ Անդամներից ստացուած խոստումը, կատարեալ ժուժկալութեան խոստում է։ Նրանք նաև խոստանում են չը խաղալ, բնաւ ծխախոտ գործ չածել և յիշոցներից ու լկտի խօսքերից հեռու մնալ։»



Նմանապէս երեխաների ընկերութեանց շարժումը, Ֆրանսիայում իրա արձագանքը գտնում է, ինչպէս հաղորդում է Բօդրիյեար։

Baudrillard. — Բելգիայում, երեխաների միջև ժուժկալութեան ընկերութիւնները, մանչերի դպրոցներին երկու երրորդից աւելին իրանց մէջ են առած։ Ֆրանսիայում, նրանց աճումը ներկայումս արագ է, սակայն տակաւին Բելգիայում ձեռք բերուածից հեռու է։»

Երեխաների հակալկոլական դաստիարակութեան դէմ եղած առարկութիւնները ջրելուց յետոյ, հեղինակը ասում է. «Լաւ է, որ դպրոցական ընկերութիւնները կենտրոնական դաշնակցութեան հետ հաղորդակից լինեն։ Անդամների նուազագոյն տարիքը պէտք է 10 տարեկան որոշուած լինի և խոստումը մի տարուց աւելի պէտք չէ երկարի։»

Ֆինլանդիայում երեխաների միջև կատարուած հակալկոլական պրօպագանդայի մասին Տիկին Ալլի Տրիգ Հէլինիուս հետևեալ շահեկան տեղեկութիւններն է հաղորդում։

Mme Alli Trygg Helinius. — 1847 թւին Pida Hellmann վարժուհին, Ֆինլանդական առաջին ժուժկալական ընկերութիւնը հիմնեց, որը ունեցաւ երեխաների համար մի մասնաճիւղ։

1874 թւին Եակոբշտադում (Jacobstad) մի մանկավարժ պաշտօնից զրկւեց, իրա աշակերտներին հակալկոլական մի դաս տուած լինելուն համար։ Այս միևնոյն տարին, հակալկոլական պրօպագանդայի հարցը, մանկա-

վարժների պաշտօնական համաժողովում վիճաբանութեան առարկայ դարձաւ. այս րոպէից սկսած, նրանցից շատեր դպրոցական ծրագրում մտցրին հակալկոլական ուսուցումը և երեխաների մէջ հակալկոլական պրոպականդայի շարժումը արագ յառաջադիմութիւններ առաւ։

1885 Թ. Նոյն այս տարւայ մէջ հրատարակուած Ժուժկալութեան թերթը հարցը վիճաբանութեան է ենթարկում։ Հակալկոլական տիպար դասեր են տալիս։

1887 Թ. Երեխաների համար ժուժկալական անդրանիկ ընկերութեան և Հէլսինգֆորսում (Helsingfors) ժուժկալութեան առաջին դպրոցի հիմնարկութիւն։

1890 Թ. Հիմնարկութիւն «Առողջապահութեան և ժուժկալութեան համար մանկավարժների ընկերութեան», որը Հէլսինգֆորսի ընկերութեան միացած, հակալկոլական շարժման մի ազդեցիկ զարկ տուեց։

1891 Թ. Բոլոր մանկավարժներին ուղղուած շրջաբերական, խնդրելով հակալկոլական դասեր տալ իրանց աշակերտներին։

1892 Թ. Հակալկոլական առաջին գրքոյկի հրատարակութիւն։

1893 Թ. Երեխաների համար ժուժկալական շաբաթաթերթի հրատարակութիւն։

1896 Թ. Տիկին Տրեդ Հէլենիուս Լօնտոնում ուսումնասիրում է Bands of Hope ընկերութեանց գործունէութիւնը և վերադարձին 13 քաղաքների թաղապետական ժողովներում այս նիւթի մասին դասախօսութիւններ է կարդում, և



նրանցից տասնին համոզում է և ստանում հակալկոլական ուսումը կազմակերպելու միջոցներ։

1897 Թ. Այս 13 քաղաքներում չափահասների և երեխաների համար հրապարակախօսութիւն և Ալկոլի մասին գիտութեան Ուսուցածը պատկերազարդ հատորի հրատարակութիւն։

1898 Թ. Ֆինլանդիայի 36 քաղաքներից 20 ը այս պրոպագանդան քաջալերելու համար 200 ից 1000 ֆրանկ տուած են։ «Առողջապահութեան և ժուժկալութեան Մանկավարժների Միութիւնը» հրատարակեց երեխաների համար մի շարք հակալկոլական դասախօսութիւններ, երեխաների հաւաքումների ծրագիրներ և Ալկոլի մասին Գիտութեան խօսքը անուն հատորը զարդարող 12 հատ պատի մեծ պատկերներ։ Բազմաթիւ քաղաքներում մի գործակալ կարգած է, որ երեխաներին թէ դպրոցում և թէ դպրոցից դուրս դասախօսութիւններ է կարդում։ Այս ուսուցումը փոքրաթիւ դպրոցներում միայն պարտաւորիչ է։ Գիւղական դպրոցների շատերում մանկավարժների կողմից այս կարգի դասախօսութիւն կարդացուած է։ Հասարակաց կրթութեան պաշտօնատունը բոլոր մանկավարժներին մի շրջաբերական ուղարկած է, խնդրելով իրանց աշակերտներին հակալկոլական դասեր տալ։»

Դպրոցում այսպէս սկսուած կռիւը պէտք է դպրոցից յետոյ էլ շարունակել, այս է փափագում Պ. Պըտի։

E. Petit.— Նկատելով, որ պատանեկութեան տարիքը ալկոլի դէմ կռուելու ամենայարմար տարիքն է, կարելի է որ

1° Ժողովրդական դաստիարակութիւնը՝ իրա ամէն ձևերի տակ, ինչպէս չափահասների դասընթացքներ, ընթերցանութիւններ, հրապարակախօսութիւններ, նախկին աշակերտների ընկերակցութիւններ, հովանաւորութիւններ, մարմնամարզի և ժողովրդական կրթութեան ընկերութիւններ՝ որոշապէս պէտք է ուղղւի սիստէմատիք և ազդեցիկ պրօպագանդայի ձևով ալկոլականութեան դէմ.

2° Մանկավարժները, դպրոցի բարեկամները պէտք է, որ իրանց աջակցութիւնը նուիրեն, ոգելից ըմպելիների չափազանցութեան դէմ մղւած կռւում նախաշարժողների կողմից փորձւած ջանքերին։»

Անգլիայից Frielden Thorp d'York միևնոյն եզրակացութեանց յանգող մի զեկուցում կարդացած է։

---

### ՍՊԱՆՕ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱԼԿՈԼԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Parker (Տեղեկալ գնդապետ). — Բարձր հրամանատարը բանակը ժուժկալութեան ենթարկած էր, և գլխաւոր բժիշկը մի շրջաբերականով արևադարձի կլիմաների տակ խմիչքներից գոյանալիք վտանգների դէմ բանակը զգուշացնում էր։ Սակայն այսուհանդերձ, որ և իցէ արգիլող միջոցի չը դիմեց. շահամոլիր մարդիկ բանակների շրջում և քաղաքներում վատ տեսակից և ցածարժէք ոգելից ըմպելիներ վաճառում էին։ Ոգելից ըմպելիներ գործածող զինուորները անկարգապահութիւններ էին անում և հիւանդութիւնների զոհ լինում։ Պորքըր գնդապետը իրա գօրագնդում մի ժուժկալական լօժ կազմակերպեց և այս միջոցը նշանաւոր արդիւնքներ ունեցաւ. մի վրանում եօթ ժուժկալներից և ոչ մէկը չը հիւանդացաւ, մինչդեռ նրա կից վրանում խմիչք գործածող եօթ զինուորներից միայն երկուքը չը հիւանդացան, միւս հինգը հիւանդանոց փոխադրւեցան և մի քանիսը մեռան։ Հեղինակը ինքն էլ ժուժկալ լինելով, պատերազմի միջոցին կատարեալ առողջութիւն վայելեց։



Նոյնպէս հարիւրապետ Guieyese բանակում ալկոլականութեան դէմ կռւելու համար մի ծրագիր է ներկայացնում։

---

### ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԺՈՒԺԿԱԼԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Thomson. — Այս ընկերութիւնը 1882 թւին հիմնըւած է։ Բրիտանական երկաթուղիների 470,000 պաշտօնեաներից 20,000ը ներկայումս յիշեալ ընկերութեան անդամ են։ Ընկերութեան սկզբունքն է, երկաթուղիների պաշտօնեաներին ժուժկալութեան խրախուսել, անժուժկալներին արգիլել, նրանց ստորագրել տալով կատարեալ

ժուժկալութեան մի խոստում և նրանց ճանապարհից հեռացնել ամէն բան, որ կարող է անժուժկալութիւն պատճառել:

«Պրոպագանդայի միջոցներն են, հրապարակախօսութիւններ, ընտանեկան երեկոյթներ, անհատական ներգոր- թիւն, և On the line անունով մի ամսաթերթ:

«Անգլիայում երկաթուղիների պաշտօնեաների միջև արբեցողութիւնը քիչ է, բայց ընկերութիւնը մտադրում է չարիքը կատարելապէս արմատախիլ անել:

---

## ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԺՈՒԺԿԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Rae.— Այս դաշնակցութիւնը ոչ-դաւանական մի ընկերակցութիւն է և քաղաքական որ և իցէ կուսակցութեան չէ պատկանում: Բոլոր անդամները կամաւոր ստորագրում են ժուժկալութեան խոստումը: Նրա ազդեցութիւնը կրօնականների մօտ ես տարածւած է, որոնք եկեղեցիներում ժուժկալական ընկերութիւններ կազմած են. մանաւորապէս ջանացած է իր գաղափարները տարածել բժիշկների շրջանում և նրա այս ազդեցութեան տակ կազմւած են բժիշկների ակումբները, և որանք հիմնած են Ժուժկալութեան բժշկական թերթը (Médical Temperance Journal), 1872 Յունուարի 1 ին Տայմզ թերթում հռչակաւոր 269



բժիշկների և վիրաբուժների կողմից ստորագրւած մի յայտարարութեամբ: Դաշնակցութիւնը տարրական և երկրորդական վարժարաններում ալկոլականութեան մասին դասեր հաստատած է, որ իրանց միջից ընտրւած դասախօսների կողմից աւանդւում են. հրատարակած է Դոկտ. Րիչարտսընի կողմից խմբագրւած Ժուժկալական դասագիրքը (Temperance Lesson Book) և պրօֆէսօրների ու մանկավարժների շրջաններում հաւաքումներ և հրապարակախօսութիւններ կազմած է: 1860 թւին Դաշնակցութիւնը աշխոյժ կերպով գործել սկսած է բանակում. ժուժկալութեան քարոզիչները՝ զինուորական վարչութիւնից քաջալերւած, թէ Անգլիայում և թէ Հնդկաստանում պրօպագանդայի մի մեծ գործ կատարած են. Հնդկաստանում զինուորների մէջ կազմւած է կատարեալ ժուժկալական ընկերութիւնը (Salcheis Total Abstinence Association):

«Դաշնակցութիւնը նոյնպէս օգնած է Օրխարդ Րօբէնսընի, որը զինուորների համար ժուժկալական ընթերցարաններ հաստատած է: Այս բոլոր շարժումը Բանակի ժուժկալական ընկերութեան (Army Temperance Association) կազմելուն նպաստած է, որը կառավարութիւնից տարեկան 12,500 ֆրանկի մի նպաստ ստանում է: Նոյնատեսակ մի ընկերութիւն գոյութիւն ունի ծովային զինուորների համար: Դաշնակցութիւնը կանանց գործակցութեան կոչում ընելու անհրաժեշտութիւնը զգալով, 1876 թւին կազմւած է Բրիտանական կանանց ժուժկալական ընկերութիւնը (British Women's Temperance Association և

կազմակերպուած են կանանց բազմաթիւ հաւաքոյթներ ու ժողովներ։ Դաշնակցութիւնը մանաւանդ օգտակար նկատած է մամուլի զօրեղ ազդեցութիւնից աւելի լայն կերպով օգտուել և ունի շատ տարածուած մի շաբաթաթերթ օրգան, National Temperance minor անունով մի էժանագին ամսաթերթ և կանոնաւորապէս հրատարակում մի տարեցոյց, որը պրօպագանդայի մասին նրա կազմածը ամբողջացնող վիճակագրական ճշգրիտ տեղեկութիւններ պարունակում է։ Ալկոհոլականութեան մասին Mansion House-ում, Guild hall-ում և բազմաթիւ մեծ քաղաքների թաղապետարաններում միտինգներ կազմուած են. Լօնդօնում, Լիվերպուլում, Բիրմինգամում և Չէստէրում ազգային կօնգրէսներ կազմակերպուած են, հիմնուած է Ժուժկալական ազգային խմբերգական միութիւնը (National Temperance choral Union), որ իրա ծրագրում արձանագրած է կատարեալ ժուժկալութիւնը, և գաղութների բնիկներին զօրաւոր խմիչքներ վաճառելու դէմ պայքար մղած է։ Ստեղծուած են ժողովրդական ընկերութիւններ (Old guard of London workers, London young men's auxiliary) և գործաւոր դասակարգերում մշտական մի պրօպագանդա գործելուց չէ դադրած։



## «ՅՈՒՍՈՅ ԽՈՒՄԲԵՐԻ» ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Օրիորդ Hilda Dillon (Լօնդօնից). — Յուսոյ խումբերը՝ (Bands of Hope) ժուժկալութեան նուազ հին ընկերութիւնները՝ 50 տարուց ի վեր Անգլիայում գոյութիւն ունին։

« Առաջինը 1847 թւին Carlile-ի կողմից հիմնուած է։ Նրա յաջողութիւնը հրաշալի եղաւ. արբեցողների սովորական նախապաշարումներով խափանուած չէ։ Երեխաները իրանց ծնողների հաւանութեամբ ստորագրում են կատարեալ ժուժկալութեան խոստումներ, առանց որոշ ժամանակամիջոցի։

« Այս խումբերը 3 միլիօնի մօտ երեխաներ հաւաքած են և նրանց ծոցից դուրս են եկած ալկոլականութեան դէմ կռուող բազմաթիւ անձեր։ Նրանցից Անգլիայում 70,000 կայ։ Այս ընկերութեանց մեծագոյն մասը 1864 թւին Shirley-ի շնորհիւ կազմած են, Անգլիական Յուսոյ խումբերի մի դաշնակցութիւնը։

«Այսպէս համախմբուած երեխաները ունենում են շաբաթական զուարճութիւններ երգերով, աղօթքներով, դասերով և շատ անգամ մեծ հանդէսներ մարշերով, որոնցից գոյանում է իրանց եկամուտների մեծագոյն մասը։

«Դաշնակցութիւնը մասնաւոր 19 պրօֆէսօրներ է պահում, որոնք դպրոցներում ժուժկալութեան դասեր են տա-

լիս։ Ժուժկալութեան մասին գրած լաւագոյն հեղինակութիւնները վարձատրւում են։

«1897 – 1898 տարեշրջանում տեղի են ունեցել 4,680 հրապարակային դասախօսութիւններ և 260,261 խմբագրութիւններ, և ներկայ են եղել 496,751 աշակերտներ և 15,104 ուսուցիչներ։

---

### ԲԱՐԻ ՏԱՃԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՒԽՏԸ
### ԵՒ
### ՆՐԱ ՈՅԺԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Malins.— Բարի Տաճարականների ուխտը 50 տարի առաջ հիմնուած է (Ordre des Bons Templiers)։ Ներկայումս Մեծն-Բրիտանիայում 400,000 անդամ կայ և Շւէյցիայում 100,000 ից աւելի և շատեր միւս բոլոր երկիրներում։

«Տեղական լօժերը ամէն շաբաթ գումարւում են և կազմում կօմիտէյի Լօժերը, որոնք տարին 4 անգամ խորհրդակցում են։ Պետութեան 70 մեծ լօժերը բարձրագոյն լօժի համար ներկայացուցիչներ են ընտրում, որը տարին 2 անգամ խորհուրդ է կազմում։

«Անգլիական մեծ լօժը իրա մասնաճիւղերով շատ ուժեղ է, 750 մասնաճիւղեր ունի։

«Անդամները միմեանց օգնում են և կռւում այս շա-



րիքի, ծխախոտի, անվայել խօսքերի, և այլնի դէմ։ Ընկերութիւնը մեծ թուով թերթեր ունի։

«Այս ընկերութիւնից Պելգիայում 85 մասնաճիւղեր գոյութիւն ունենալը նշանակած էր, 2 տարի առաջ Բրուքսէլի կօնգրէսում, այսօր կարող եմ նրանցից 99 հատ նշանակել, իսկական անդամների թիւը 5,372 ի և համախոհների թիւը 11,815 ի է բարձրանում։ Բացի սրանից, Լահէյում, Ռօտտէրդամում և Գրօնինգէնում կանանց համար 68 անդամներով մասնաւոր 3 մասնաճիւղեր կան, նաև երեխաների համար 53 մասնաճիւղեր։ Ժուժկալական սրճարանների թիւը 23 ի է բարձրացած։ Փողոցներում շրջող և բազմամարդ վայրերում կեցող շրջուն սրճարան—խանութների թիւը, մանաւանդ մեծ քաղաքներում, շատ մեծ է։ Ռօտտէրդամ քաղաքը նոյն իսկ ժուժկալական մի նաւ ունի, որ խարսխող նաւերին այցելում է։ Մասնաճիւղերում կազմակերպւող երգեցիկ ընկերութիւնները նոյնպէս մեծ ծառայութիւն են մատուցանում։ Շատ անգամ, մի ճշմարտութիւն աւելի լաւ ընդունելութիւն է գտնում, երբոր երգւում է, քան թէ քարոզւում։ Մասնաճիւղերից մէկը նոյն իսկ երաժշտական մի խումբ ունի, որի մասին Սառրին—Նահանգներում շատ խօսւում է։»

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄԻ ԺՈՒԺԿԱԼԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

*Պատ.* Wasfold. — *Արդէն 1832 թւին անգլիական եկեղեցու մի քանի կղերները ժուժկալական ընկերութիւններ կազմելու նպատակաւ ուրիշ անձերի հետ միացած են։*

*« 1845 թւին 2,000 ից աւելի բժիշկներ յայտարարած են, որ առողջ ապրելու համար անհրաժեշտ չէ խմիչքներ գործածել և նոյն իսկ եթէ ժուժկալութիւնը ընդհանուր լինի, մարդկային սեռի առողջութեան և երջանկութեան կը նպաստէ։ Այս րոպէից սկսած, ժուժկալութեան գործը արագապէս յառաջադիմեց։*

*« Անգլիական եկեղեցին 1859 թւին պայքարին մասնակցել է, սակայն 1870 թւին է, որ աւելի տարածում և համախոհներ գտնելու համար չափաւորների մի մասնաճիւղ աւելացրել է։ Յայտնի եղաւ, որ շատեր, որոնք կատարեալ ժուժկալութիւն չէին կարող խոստանալ, կարողանում էին սակայն ընկերութեան զանազան գործերում աջակցել, ինչպէս, Յուսոյ խումբեր կամ ժուժկալական դպրոցներ, Կիրակի օր խմիչք վաճառելու դէմ, բանտերում պրոպագանդա, ժուժկալական սրճարանների, ընթերցարանների, և այլնի հաստատութիւն։*

*Մօտաւորապէս մէկ միլիոն անձեր այս կազմակերպութեան մասնակցում են և ամէն տարի 50,000 ոսկի ծախսւում է։ »*



## ԿԱՆԱՆՑ ԵՒ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

*Ընտանիքում կինը՝ օջախի պահապանը՝ կատարելու շատ կարևոր մի դեր ունի։ Օրիորդ* Agnès E. Slak *(Բիպլէյից, Անգլիա) մի տեղեկագիր է ներկայացրած «արբեցողներին կատարեալ ժուժկալութեամբ զգաստացնելու մէջ կնոջ ունեցած պաշտօնին վրայ»։ Ընտանիքում կնոջ կողքին բժշկի դերը շատ կարևոր է։*

*Այս մասին* Bienfait *(Լիէժից) խօսելով ասում է. «Բժիշկը, մարդկութեան բնական խնամակալը, պարտաւոր է զգուշացնել իրա նմաններին, ցեղը և առողջութիւնը վտանգող բոլոր գործողութիւնների դէմ։ Ուրեմն, պարտաւոր է ալկոլը հարուածել։»*

## ԱԼԿՈԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԴԻՒՂԱՏԷՐԵՐԻ ԴԵՐԸ

Le comte de Vincelles *(Կոնկարնոյից).— Գիւղացիներին և գործաւորներին ժուժկալութեան վարժեցնելու համար, առաջին բանը նոյն իսկ գիւղատիրոջ ժուժկալ լինելն է։*

*Պայքարի դժուարութիւնը և վտանգի մեծութիւնը ցոյց տալու համար Գ. դը Վէնսէլ հետևեալ բնորոշ դէպքը յի-*

չում է. տուփով սարդին ձուկեր պատրաստող գործարանը ընդհանրապէս ձկնորսին արաղով (կէս լիտր, որ արժէ 25 սանտիմ) պարտք է վճարում և սրա փոխարէն ձկնորսը նրա տալիս է 5 % աւելի ձուկ։ Դադրեցրէ՛ք արաղը, դուք դադրեցնելու էք աւելորդ ձուկը։ Կօնկարնօյի 22 գործարանները 5 ամսւայ ձկնորսութեան համար 35,000 ֆրանք արժողութեամբ արաղ պարտք տւած են։

Տեղեկատուն յայտնում է, որ գինետների թիւը 500,000 է, այսինքն 76 բնակչի համար և կամ 30 չափահասի համար 1 գինետուն։ Իօր Նահանգում 3 չափահասի համար մի գինետուն կայ։

Տեղեկատուն իւր անհատական ազդեցութեան միջոց մասնաւորապէս յիշում է, 1 — Չափաւորութեան դէպքում յաւելւածական մի պարգև տալ։ 2 — Ամէն անգամ որ կարելի լինի, կիրակնօրեայ ծախսից արգիլելու համար վարձքերը երկուշաբթի օր վճարել։ 3 — Զբօսեցնող կամ կրթող զւարճութիւններ կազմել։ 4 — Խաղերը քաջալերել, նրանց յատուկ մի վայր յատկացնելով։ 5 — Հողը վաճառել, այս հողերի վրայ ալկոլի վաճառումի դէմ արգելիչ պայմաններով։ 6 — Թաղապետների վրայ ազդել, որոնք իրաւունք ունին գինետները փակել։ 7 — Ժողովրդական ճաշարաններ սարքել, այնտեղ վաճառելով ալկոլ չը պարունակող ըմպելիներ։



## ԺՈՒԺԿԱԼՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐ

Պատ. James Silvester (Լօնդօնից). — Արբեցողներին միայն ժուժկալութեան խոստումներ ստորագրել տալ բաւական չէ, պէտք է նաև նրանց քաջալերել լաւ ուղղութեան մէջ ընթանալու, նրանց տրամադրութեան տակ դնելով այնպիսի հաստատութիւններ, որոնք կարող են հակակշռել չարիքը։ Այս հաստատութիւնները 3 տեսակ են։

1. — Ժուժկալական ճաշարան — սրճարան (Café restaurant), որ գինետնից աւելի լաւ պէտք է պահել։

2. — Գործաւորի ընկերականութեան պէտքերին բաւականութիւն տալու համար ընթերցարան և խաղատուն։ Այնտեղ կը մատակարարւին թերթեր ու խաղեր, սակայն խումար խաղալը պիտի արգիլել։

3. — Ժուժկալութեան կլիւբ, որտեղ հասարակ մարդը պիտի կարողանայ ազատապէս վիճել քաղաքական և ընկերական հարցերի վրայ, որոնք իրան շահագրգռում են, և պիտի կարողանայ իւր քաղաքացիական դաստիարակութիւնը ստանալ։

## ԱԼԿՈՀԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՋՆՋԵԼՈՒ ԱՐԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Adolph Daum.— Գինետունը իր ձգողութիւնը միայն ալկոլին չէ պարտական, ինչպէս Գոկս. Լըգրէն շատ լաւ ասաց, այնտեղ փնտռում են գործեր, զրօսանք և հանգիստ։

«Գործաւոր դասակարգերի համար գինետունը այն միակ վայրն է, որ նրանց ընծայում է հանգստութիւն և հաճոյք։ Գործաւորին բնակարանը նեղ է, երեխաներով համախմբուած։ Գինի ցանկայ իրա ընկերներից լուրեր իմանալ, մի բան, որ իրան շահագրգռում է իրա կրթութեան չափի համեմատ։ Ցանկանում է իրա միտքը ուրիշ առարկաներով զբաղեցնել քան թէ արհեստով կամ իրա թշուառութեամբ։

«Այս բոլորը իրա տնում չէ կարող գտնել։ Նաև գնում է սրճարան, բայց յետոյ գինետուն է վերադառնում։ Հետզհետէ ալկոլին վարժւում է, սիրում է գինետունը։

«Իրերի այս վիճակին իբր դարման, հարկաւոր է արբեցողներին սովրեցնել և նրանց, որոնք տակաւին չեն գիտեր թէ ալկոլականութեան վտանգները որոնք են։ Հարկաւոր է մանաւանդ գինետան փոխարինել նուազ վտանգաւոր հաստատութիւններ։

«Անգլիայում գոյութիւն ունէ գործաւորների կլէպներ, որտեղ երեկոները ընթերցանութեամբ, խօսակցութեամբ և խաղով զբօսնում են։ Ալկոլը արգիլուած է։



«Նոր–Եօրքում 1886 թւին հիմնած են ազատ մուտքով ժողովրդական լսարաններ։ Սկզբում ունկնդիրների թիւը 22.149 ը անց է կացել և 1897 ին 698,400 էր։

«Դէրզդէում (Dersde) կիրակի երեկոներ ամէն դասակարգերից այրամարդ և կին մի մարմնամարզական սրահում հաւաքւում են։ Յաջողութիւնը այնքան մեծ է, որ հարիւրից աւելի գերմանական քաղաքներ իրանց ժողովրդական երեկոյթներն ունեն։ Դրէզդէ ունի մի հասարակաց տուն՝ (volkscheim) պարտէզով, պարքով, լճով, խաղերի համար պաշտամայրով, դրադարանով, և այլն։

«Վիէննայում ամէն կիրակի քսանից աւելի բարեկոնցէրտներ տեղի են ունենում։ Գլխաւոր թատրոնների երաժիշտները այս գործին նուիրում են իրանց աջակցութիւնը։

«Զուգընթացաբար հասարակական գրատուները աւելի յաճախորդներ են ունենում և լուրջ գրքերը հետզհետէ վէպերի վրայ աւելի մեծ տեղ են բռնում։

## ՆԱԽԱՍՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԱՆԽՄՈՐ ԳԻՆԻ

Ruyssen առաջարկում է, ծովային զինուորներին և ընդհասարակ նաւաստիներին ցամաքում ալկոլ չը մատակարարելու համար հաստատել նաւաստիների տներ (Mai-

son de Marins), որոնք աւելի կամ նուազ ուղիղ կերպով ալկոհոլականութեան դէմ կռւում են։ Ներկայումս ֆրանսիայում 8 նաւաստիների տներ կան զանազան նաւահանգիստներում։

Lionel Mundy (Լոնդոնից) առաջարկում է, չը գինովցնող անխմոր գինի պատրաստել, ինչպէս Franck Wriggt նախ հաղորդութեան սուրբ խորհրդի և երկրորդ խմելու համար եղած պահանջներին գոհացում տալու նպատակով պատրաստում է։ Անխմոր գինին պատրաստւում է խաղողի ջուրը 82 աստիճան (ցելզիուս) տաքացնելով, քամելով և նորից տաքացնելով շիշերի մէջ է դրւում։ 25 տարուց ի վեր անխմոր գինու սպառումը շարունակաբար աճում է։

## ՀՕԼԱՆԴԻԱՅՈՒՄ
## ՀԱԿԱԼԿՈԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Van Der Meulen. — Հօլանդիայում զօրաւոր խմիչքների չափազանցութեան դէմ գործադրուած օրէնքը ձգտում է գինետների թիւը նուազեցնելու, մասնաւոր արտօնութեան տէր տներից և բնակարաններից դուրս խմիչքների վաճառումը արգիլելու, նոյնպէս փողոցներում արբեցողութիւնը պատժելու։

« Այս օրէնքի հրատարակութիւնից առաջ գինետների թիւը 42,000 էր, այժմ 24,000 է, այսինքն 18,000



գինետուն պակասել է, և հետզհետէ նուազում է, այնպէս որ ներկայումս 200 բնակչի համար մի գինետուն կայ, մինչդեռ 1882 թւին 129 բնակչի համար մի գինետուն կար։ Սակայն սպառումը $8\,^1/_2\,^0/_0$ պակասած է։ »

## ՈԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԻՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ
## ՕՐԻՆԱԿԱՆ ԱՐԳԻԼՈՒՄԸ

Fielden Thorp (Անգլիայից). — 1851 թւականից սկսած արգիլումը գոյութիւն ունի Maine-ում, և քիչ յետոյ ուրիշ բազմաթիւ նահանգների կողմից ընդունուած է։ Արգիլումը տիրում է միշտ հետևեալ նահանգներում՝ Maine, Vermont, New Hampshire, Kansas, North Dakota և Alaska։

« Այն նահանգներում, որտեղ բացարձակ արգիլումը չէ տիրում, մեծագոյն մասը ունի տեղական ընտրութեան դրութիւնը, որով բնակիչները՝ թաղապետութեան միջնորդութեամբ կամ մի ազգային վճռով՝ իրանց մօտ գինետան հաստատութիւնը արգիլելու իրաւունքը ունին։

« Գիւղական հասարակութեան մէջ արգիլումը կատարելապէս յաջողուած է. մեծ քաղաքներում սակայն նրանից պրծնելու միջոցներ գտնում են։ Նոյն իսկ այնտեղ, որտեղ խմիչքների վաճառումը չէ ջնջուած, արգիլող օրէնքը դատապարտած է այն իբր անբական և ապօրինի մի գործ, մաս-

նաւոր արտօնութեամբ գինետուն բաց անելու յօժարութիւններ բնաւ գոյութիւն չունեն։

«Նոյն բանը կարելի է ասել Կանադայի համար, որտեղ Quebecի նահանգը միայն ազգային բացարձակ արգիլման դէմ է քուէարկած. մինչեւ Կանադական միւս բոլոր նահանգները մի ահագին մեծամասնութեամբ արգիլումը խնդրած են։ Թէ ընդհանուր օրէնքով եւ թէ տեղական վէտօյի միջոցով հրամայուած արգիլման նպաստաւոր արդիւնքները ամէն տեղ հաստատուած են։ Միացեալ Կայսրութեան մէջ բազմաթիւ գիւղեր, ժուժկալ ժողովուրդներ, եւ այլն կան, որտեղ հողատէրը այս արգիլումը ինքն է դրած, ի մեծ շահ բնակիչներին։ Kingdom Alliance ընկերութեան նպատակն է օրէնսդիր իշխանութեան ընդունել տալ մի օրէնք, որը արտօնէ բնակիչներին իրանք իրանց պաշտպանել հաստատապէս ալկոհոլականութեան աղէտների դէմ, եւ արգիլել բարձր պաշտօնեաներին խմիչքների խանութ բաց անելու որ եւ իցէ արտօնութիւն չը տալ։ Օրինագծի այս սկզբունքը ազատական կուսակցութեան կողմից ընդունուած է իրանց ծրագրի իբր ամբողջացուցիչ մի մասը։



## ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՄԵՆԱՎԱՃԱՌՈՒ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՊԱՏԱԿԸ

Raffalowich. — Ալէքսանդր III կայսեր նախաձեռնարկած 1894 թուի ռէֆորմը նպատակ ունէր արբեցողութիւնը նուազեցնելու, մասնաւորների ձեռքից ալկոլի վաճառումը առնելով եւ խանութների (տրակտիր) թիւը սահմանափակելով, կրէդիտի դիւրութիւնով եւ ուրիշ միջոցներով ժողովրդին արբեցողութեան ունեցած հակումը արգիլելու։

«Ռէֆորմը նպատակ ունէր շրջաբերութեան մէջ միայն վերաթորուած (զտուած ու մաքուր) ալկոլի մուտքը թոյլատրել։ Վերջապէս, ժուժկալական կոմիտէների կազմութեամբ կառավարութիւնը ուզեց ժուժկալութեան համար մղուած պայքարին մէջ ռուս ընկերութեան ընտրելագոյն մասին գրաւել, այսինքն, Ռուսաստանում մշակների, գիւղացիների եւ գործաւորների նիւթական եւ բարոյական մակարդակը բարձրացնելու համար կատարուած ջանքերին մէջ։

«Իբրեւ փորձ 1894 թւին արեւելեան 4 նահանգներում մտցրուած ռէֆորմը, բարոյական եւ տնտեսական տեսակէտից այնպիսի արդիւնքներ տուեց, որ կառավարութիւնը որոշեց, յաջորդաբար նոյնը տարածել եւ կայսրութեան հասարակ օրէնքի կարգը անցնել։

«Պէտք է նկատել, որ զանազան նկատողութիւնները չեն որ ռէֆորմը թելադրած են. ֆինանսների նախարարութիւնը, ոգելից ըմպելիների արտադրութեան վրայ պատու-

հական պակաս արժէգներ փոխելու չէր վարանում (և հասարակական գանձային ծանր կացութեան առաջ կարող էր վարանել). արբեցողութեան նուազումը միթէ միւս բոլոր ուղղակի կամ անուղղակի հարկերի մուտքերը աւելացնելու չէ՞ր:

« Ցուցացածից աւելի արդիւնքներ քաղուած են. մաքուր ալկոլի վաճառումը, գինետների թւին պակասեցումը, միօրինակ արժէքի հաստատութիւնը, համեմատական չափը, մի միայն կանխիկ վճարով ոգելից ըմպելիներ մատակարարելը ամենաօգտաւէտ ներգործութիւններ ունեցած են, նոյնիսկ ժողովրդի նիւթական պայմանների վրայ: Այս յառաջադիմութիւնը, ուրիշ տուրքերի կողմից գանձի հասոյթներին աւելացմամբը և նահանգներում, որտեղ խմիչքների մենաշնորհը տիրում է, խնայողական սնտուկներում պահեստի դրուած գումարների կուտակումը հաստատուած է:

---

## ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՈՒՐԸ ԵՒ ԲՆԻԿ ՑԵՂԵՐԸ

Harford Battersby.—Նուաճուած ժողովրդների և ազնւա ցեղերի հանդէպ ծանր պատասխանատուութիւններ ունենք: Շատ պարագաներում, ստորին ցեղերը վատ կերպով ազդւում են և միայն այսօրւայ գործ չէ պաշտօնապէս հաս-



տատելը թէ « վերջին չորս դարերում եւրոպացիների հետ շփումը և եւրոպական վաճառականութեամբ » ժողովուրդին վատթարացրել են, փոխանակ ազնւացնելու:

« Աշխարհիս բոլոր մասերից միայն Աֆրիկան այս գործում աւելի վտանգուած է: Այն գաղափարը՝ թէ սպիտակները, միայն վատթարացնելու համար քաղաքակրթում են, սոսկում է պատճառում:

Հեղինակը զանազան միջոցներ առաջարկելով, իրա խօսքը վերջացնում է:

Միեւնոյն բանի մասին խօսում է նաև Պառ. Mérille de Colleville (Անգլիայից), Կոնգօն նկատի ունենալով:

---

## ԱԼԿՈԼԱՄՈԼՆԵՐԻՆ ԽՆԱՄԵԼ ՈՒ ԴԱՐՄԱՆԵԼ

Եղած բոլոր ջանքերին հակառակ, ալկոլականութիւնը տակաւին իրա աւերումները չորս կողմ տարածում է: Զարիքը պէտք է սահմանափակել, սակայն հարկաւոր է նաև խորհել, ալկոլամոլներին խնամելու և նրանց դէմ ընկերութեան մնացորդ մասին պաշտպանելու համար:

Ալկոլամոլներին դարմանելու համար Կոնգրէսում առաջարկուած է Թրքական բաղանիք գործածել, սակայն այս միջոցը մեզ մեծ յոյս չէ ներշնչում:

Forel առաջարկում է թմեմններին խրատել ու դարմանել, իսկ ծանրերին ու վտանգաւորներին մասնաւոր շէնքերում փակել. Թւում է նաև արբեցողների հինգ աստիճաններ և նրանց դարմանելու համար զանազան միջոցներ ցոյց է տալիս:

E. Colla եւ վերոյիշեալին ձայնակցելով, առաջարկում է հիմնել ալկոլամոլների համար մասնաւոր հաստատութիւններ և սրանց մասին տալիս է հարկաւոր ծրագիրներ և անօրինութիւններ:

*
* *

Այս կոնգրէսի աշխատութիւնները և տեղեկագիրները քննադատել մեզ չէ վերաբերում, միայն անշուշտ պիտի ներուի մեզ նշանակելու, որ խօսողների մեծագոյն մասը զբաղուած էն, այս ախտին երեւոյթները և նրան դարմանելու միջոցները ուսումնասիրել: Ժուժկալական ընկերութիւնները, հակալկոլական կրթութիւնը, կանոնաւորութեան և նոյնիսկ արգիլող կառավարական միջոցները ծափահարութեամբ ընդունուած են: Buisson ի և Vandervelde ի հաղորդակցութիւնները աւելի շեշտում էին, ո՛չ միայն ալկոլականութիւնը ջնջելու պէտքը, այլ նրա ներքին և արմատացած պատճառները վերացնելու անհրաժեշտութիւնը: Կարելի է ալկոլականութեան յաղթել, երբոր գործաւորը իրա ցանկացած բարեկեցիկ վիճակին տիրանայ. գործաւորին բարոյական ու մտաւոր դաստիարակութեան յառաջադիմութեանց առջև ալկոլականութիւնը տեղի է տալու:



Մի քանի խօսք էլ հայերիս մէջ կատարուած հակալկոհոլական շարժումների մասին ասենք:

Ճշմարիտ է, որ երկար ժամանակներից ի վեր թերթերում և մասնաւոր գրքոյկներում ազդու կերպով ալկոլի դէմ կռիւ է մղւում և ժուժկալութիւն է քարոզւում, սակայն այդ խօսքերը, այդ քարոզութիւնները գործնական հողի վրայ դնելու պատիւը Պարսկահայերին է պատկանում: Այս տարի Մայիս ամսին Թաւրիզում կազմուած է հայերի հակալկոլական անդրանիկ ընկերութիւնը, որը ներկայումս ունի Թաւրիզում 26 անդամներ և մի ամիս յետոյ նրա իբր մասնաճիւղ Մարաղայում կազմւած է մի ընկերութիւն, որը ունի 12 անդամներ: Յոյս կայ, որ ընկերութիւնը իրա վարչութիւնը ընտրելով և բրօշիւրներ հրատարակելով պիտի շատացնէ անդամների և համախոհների թիւը և օգտակար գործ պիտի տեսնէ պարսկահայերի մէջ: Պէտք է յիշել, որ պարսկահայերի մէջ խմիչք գործածելու սովորութիւնը շատ ընդհանրացած է, ամէն ընտանիքի համար մի գինետուն գոյութիւն ունի, այսինքն ամէն ընտանիք իրա տանում պատրաստում է ալկոլական խմիչքներ և այս վատ սովորութեամբ ենթարկւում է մեծամեծ ծախսերի: Խմում են ամէն օր, թէ տղամարդիկ, թէ կանայք և թէ երեխաներ, և նոյն իսկ ծիծ ուտող երեխաներին էլ տալիս են . . . : Եթէ ալկոլականութեան կողքին կցենք սիֆիլիսը և թոքախտը, պարսկահայերի բանը խարաբ է . . . :

Ալկոլականութեան աղէտալի հետեւանքները պատկե-

բացնող մի նոր փորձ՝ մի ալկոլամոլի սերունդը՝ յիշելով վերջացնենք մեր այս ուսումնասիրութիւնը:

Bonn ի համալսարանին Պրոֆէսոր Pellmann, 1740 թւին ծնած և 1800 թւին մեռած ճշմարիտ ալկոլամոլ Ada Jurké կնոջ 709 սերունդները երևան հանած և նոյնագրած է: Սրանցից 7 ին մարդասպաններ լինելը և 76 ին ուրիշ զանազան ոճիրներ գործելը հաստատուած է, 144 ը արհեստով մուրացիկներ եղած են, 61 ը հասարակաց գթութեան կարօտ և 181 ը պոռնկացած են: Հսկողութեան, դատաւորութեան, արգելափակման և բանտարկութեան համար այս ընտանիքը գերմանական կառավարութեան վրայ 6 միլիոն ֆրանք է նստել . . . :

ՎԵՐՋ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ
## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱԿԱԼԿՈԼԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

«Ալկոլը մեր օրերում աւելի աւերումներ է
«գործում, քան թէ այս երեք պատմական
«աղէտներր՝ սովը, ժանտախտը եւ պատե-
«րազմը. Ալկոլը՝ սովից ու ժանտախտից
«աւելի է կոտորում, պատերազմից աւելի
«սպանում. սպանելուց աւելին է անում,
«անպատւութիւն է բերում.»

ԳԼԱԴՍՏՈՆ

Թաւրիզում 1899 թ. Մայիսի 1 ին կազմուած է Հակալկոլական Ընկերութիւնը, որի նպատակն է հասարակութիւնը՝ ալկոլի պատճառած անհատական, ընտանեկան եւ ընկերական չարիքներից փրկել:

Ընկերութեան հետզհետէ հրատարակելիք բրօշիւրներից (1) արդեն ընթերցողները պիտի համոզուին թէ՝ ալկոլը հասարակական մեծ չարիք է պատճառում մարդկութեան, վտանգելով նրա անդամների առողջութիւնը, խախտելով բարոյականութիւնը եւ առաջացնելով տնտեսական կործանում:

(1) Արդէն № 1 բրօշիւրը տպագրութեան յանձնուած է:

Ալկոհոլամոլներն եւ նրանց այլասերուած սերունդ-ներն են, որ լցնում են բանտերը եւ յիմարանոցները. սրանցից սերուածների մեծ մասը դեռ եւս չը ծնուած եւ կամ ծնւելուց քիչ յետոյ մեռնում են, իսկ առողջ-ները էլ ենթակայ են լինում զանազան վտանգաւոր եւ մահացուցիչ հիւանդութիւններին: Վերջապէս, ալ-կոհոլականութեան պատճառով ծննդաբերութիւնները նուազում են եւ սերունդներ այլասերւում . . . :

Ընկերութիւնս իր Կանոնադրութիւնը հրատարա-կելով, հրաւիրում է Պարսկաստանի Հայ հասարակու-թեան ողջախոհ եւ հեռատես մասը, ամէն տեղ նոյն նպատակով Մասնաճիւղեր կազմել. մեզ աջակցելու ալ-կոհոլականութեան դէմ մղուած կռւում:

Մասնաճիւղերը վարում են իրանց գործերը կեն-տրոնից բոլորովին անկախ, համաձայն մեր հիմնական կանոնադրութեան. սակայն միեւնոյն ժամանակ բա-րոյական պարտականութիւն ունեն նիւթապէս օգնելու կենտրոնական վարչութեանս (ի հարկէ իրանց միջոց-ների ներած չափով եւ տեղական մասնաւոր ծախսերը հոգալուց յետոյ), որպէսզի կենտրոնը դիւրութիւն ունենայ բրօշիւրներ, եւ այլն հրատարակելու, հարկա-ւոր գրքեր ու պատկերներ գնելու թէ Մասնաճիւղերին եւ թէ հասարակութեան ձրիաբար ցրւելու համար:

Մասնաճիւղերը կազմւում են 10 տարեկանից վեր եղող անդամներով, առանց սեռի, կրօնի եւ ազգու-թեան խտրութեան, եւ որոնք կունենան իրանց Վար-



չութիւնները: Մասնաճիւղերի վարչութիւնները պար-տաւոր են առնուազն վեց ամիսը մի անգամ իրանց գործունէութեան մասին տեղեկութիւններ հաղորդել Թաւրիզ կենտրոնական վարչութեան:

Մասնաճիւղերը կունենան իրանց անունները այս-պէս Պարսկաստանի հակաալկոհոլական ընկերութեան . . . . . . . . . ( [2] ) Մասնաճիւղ եւ Ֆրանսերէն այսպէս՝ Société Antialcoolique de Perse — Section de ........ ........................................ ( [2] )

Նորակազմ Մասնաճիւղերը պարտաւոր են իրանց կազմուած լինելը անմիջապէս յայտնել կենտրոնական Վարչութեանս:

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

| | |
|---|---|
| **Նախագահ** | — ԴՈԿՏ Ն. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ |
| **Քարտուղար** | — ՌԱՓԱՅԷԼ ՄՈՎՍԷՍԵԱՆ |
| **Գանձապահ** | — Ս. Գ. ՈՍԿԱՆ |
| **Անդամ** | — ՏԻԿԻՆ ՍԱՆԷՄ ԾԵՐՈՒՆԵԱՆ |
| **Անդամ** | — ՅՈՆԱՆ ԴԱՒԹԵԱՆ |

( [2] ) Քաղաքի անունը պէտք է դնել, օրինակ Մարաղա —

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

1 — Խոստանում ենք մեր կենաց տեւողութեան ընթացքում բնաւ երբէք ալկոլ պարունակող որ եւ է ըմպելիք չը խմել:

2 — Մեր հիւրերին, ծանօթներին, բարեկամներին եւ ազգականներին, թէ մեր տներում եւ թէ այլ վայրերում բնաւ երբէք ալկոլ պարունակող ըմպելիներ չը մատակարարել.

3 — Համոզել ուրիշներին, որ ընկերութեան անդամակցեն:

4 — Ալկոլականութեան չարիքները եւ նրա տարածումը արգիլելու համար պրօպագանդա անել, թէ խօսքով, թէ յօդուածներով եւ թէ ալկոլի դէմ ճառող գրքեր ու բրօշիւրներ հասարակութեան մէջ ձրիաբար տարածելով:

5 — Որքան կարելի է ջանալ համոզելու մեր ծնողներին, բարեկամներին եւ ծանօթներին, որ տներում գինի, արաղ եւ մաստիկ չը պատրաստեն եւ ուրիշ ոգելից ըմպելիներ՝ ինչպէս կոնեակ, ռոմ, գարեջուր, զանազան լիքօրներ, եւ այլն չը մտցնեն իրանց տներում:



6 — Համոզել հասարակութիւնը, որ հարսանիքներում, տօներում, երեկոյթներում, անուան տարեդարձներում, թաղումներում եւ այլ հասարակական վայրերում ալկոլ պարունակող որ եւ է ըմպելի չը մատակարարեն եւ հանդիսականներին չը վաճառեն.

7 — Ստիպել կրթական գործիչներին, որ դպրոցներում ալկոլի վնասները աշակերտներին բացատրեն եւ նրանց մէջ կազմեն հակալկոլական ընկերութիւններ:

8 — Բնաւ երբէք մեր այս խոստումը չը դրժել, եթէ դրժելու լինենք, ընկերութիւնը իրաւունք ունենայ մեզ ընկերութիւնից արտաքսելու եւ ամեն ընկերական ու բարեկամական յարաբերութիւն դադրեցնելու:

9 — Առանձին պարտականութիւն համարել անդամների վրայ փոխադարձ հսկողութիւն ի գործ դնել եւ խոստմնադրուժ անդամների անունները վարչութեան հաղորդել:

10 — Հակալկոլական գրքեր եւ բրօշիւրներ հրատարակելու եւ հասարակութեան մէջ ձրիաբար տարածելու համար հասոյթի միջոցներ հայթայթել, առանց անդամավճար նշանակելու. միայն կամաւոր նուէրներ ընդունել:

1289

«Ալկոլը ոչ առողջութիւն է տալիս, ոչ ոյժ, ոչ
«տաքութիւն, ոչ ուրախութիւն, այլ միայն չարիք է
«պատճառում: Ամէն խելացի և բարեկիրթ մարդ պար-
«տաւոր է ոչ միայն ինքը չը գործածել ոգելից ըմպե-
«լիներ, այլ և իր բոլոր ոյժով ուրիշներին հեռացնել
«այս թոյնից:»

ԼԷՕՆ ՏՈԼՍՏՈՅ

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0071747

«ԶԳԵ»

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱԿԱԼԿՈԼԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ հետզհետէ հրատարակելու է ալկոլի վնասները եւ չարիքները բացատրող եւ ապացուցանող այս կարգի բրօշիւրներ եւ ձրիաբար տարածելու է Հայ հասարակութեան մէջ։

Ընկերութիւնը իր այս մարդասէր ձեռնարկը իրագործելու եւ շարունակելու համար կարօտ է Հայ հասարակութեան նիւթական աջակցութեան։ Ուստի, խնդրում է, որ բարեսէր անձնաւորութիւններ իրանց նուէրները բարեհաճին ուղարկել հետեւեալ ադրեսով հասցէին, կանխաւ ընդունելով մեր շնորհակալութիւնը։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

*Monsieur Le Président de la*
*Société Antialcoolique de Perse*
*à Tauris*

معارف نظارت جلیله‌سنك ۱۰۰ نومرولی و ۲۸ نیسان ۱۳۱۷ تاریخلی رخصتنامه‌سیله طبع اولنمشدر